Azg
armenian daily
13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1997, ՇԱԲԱԹ # 239 (1493)

Կրեմլը հերքեց, թե Ելցինը ուղեղի կաթված է ստացել

12 ԴԵԿՏԵՄԲԵՐ, BBC, PC, RFI. Կրեմլը հայտարարեց, թե Ռուսաստանի նախագահ Ելցինի առողջական վիճակը գոհացուցիչ է, նրա ջերմությունը նորմալացել է եւ շաբաթվա վերջին կարող է վերսկսել զբոսանքները Բարվիխա առողջարանի բակում: Հերքվում է «Էխո Մոսկվի» ռադիոկայանի այսօրվա հաղորդագրությունը, թե Ելցինը գլխուղեղի անոթների ուժեղ ջղակծկում (սպազմ) է ունեցել: Բժիշկները թղթակիցներին հայտնել են, որ հիշատակված ջղակծկումն առաջացնում է գլխացավեր եւ միգրեն, սակայն ուղեղի կաթված եւ առողջության համար լուրջ վտանգ չէ: Նախագահի մամլո քարտուղար Յասսրժեմբսկին հայտնեց, որ չեղյալ են հայտարարվել Ելցինի հանդիպումները Բուլղարիայի նախագահ Ստոյանովի հետ, ինչպես նաեւ նրա մասնակցությունը Ռուսաստան-Բելառուս միության բարձրագույն խորհրդի եւ Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի եւ Ղրղզստանի քառակողմ մախսային միության նիստերին:

Միեւնույն ժամանակ, Չեչնիայի փոխվարչապետ Ուդուգովը հայտարարել է, թե Բորիս Ելցինի Չեչնիա այցելության նախապատրաստությունը նրա հիվանդության պատճառով հետաձգվում է: Մեկնաբանները հիշեցնում են, որ անցյալ տարի Կրեմլը մի քանի ամիս շարունակ հերքում էր, թե Ելցինը սրտի հետ կապված խնդիրներ ունի, իսկ հետո էլ սկսեց հերքել, թե նա թոքաբորբով է հիվանդ, հայտարարելով, որ պարզապես մրսած է:

ԴԱՏԱՎՃԻՌ

Վահան Հովհաննիսյանին՝ 4 տարի, Մանվել Եղիազարյանին՝ 5, Տիգրան Ավետիսյանին՝ մահապատիժ

Եվ տարբեր «տրամաչափի» ազատազրկումներ՝ «31»-ի գործի ավարտին

ԻՆԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ Գերագույն դատարանում Դավիթ Ավետիսյանի նախագահությամբ 1996 թ. մարտի 5-ին սկսված «31»-ի գործը, որը մեկնարկել էր ամբաստանյալների մի մասի նկատմամբ հայրենիքի դավաճանության եւ ահաբեկչական գործողությունների նախապատրաստության «մախինում-մեղադրանքների» հունով, երեկ ավարտվեց ամբաստանյալներին բաժնված պատժաչափերի ընթերցմամբ: Դատական կոլեգիան մերժեց վերոհիշյալ «սուպեր-մեղադրանքները», բայց դրանք փոխարինեց պետական եւ հասարակական կարգը բռնությամբ փոխելու, ահաբեկչական գործողություններ կազմակերպելու կոչերի եւ առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված գործողությունների կազմակերպման մեղադրանքներով: Այդ հանցագործություններում մեղավոր ճանաչվեցին մասնավորապես Վահան Հովհաննիսյանը եւ Մանվել Եղիազարյանը:

Դատավճռի հրապարակումից առաջ դատական կոլեգիայի նախագահը, ամփոփելով դատավարության արդյունքները, ներկայացրեց մեղմացուցիչ եւ ծանրացուցիչ հանգամանքներ ամբաստանյալների մի մասի նկատմամբ: Հաշվի առնվեց, օրինակ, որ Մանվել Եղիազարյանը, Գագիկ, Մարտին եւ Կարեն Կարապետյանները, Գնել Հովհաննիսյանը, Հարություն Սարգսյանը, Գագիկ Ավետիսյանը, Արկադի Սարդարյանը եւ Անդրանիկ Կարապետյանը մասնակցել են Հայաստանի եւ Արցախի մի շարք բնակավայրերի պաշտպանության մարտերին, նրանցից մի քանիսը վիրավորվել են մարտական գործողությունների ընթացքում, Անդրանիկ Համբարձումյանը եւ Գագիկ Կարապետյանը վաստակաւոր են, Վագիֆ Ավետիսյանը 3-րդ խմբի հաշմանդամ է: «Չմոռացվեց», որ Մանվել Եղիազարյանը «Արաբո» (գրեթե լեգենդար) ջոկատի հրամանատարն էր, ամբաստանյալների մեծաքանակության խնամքի տակ 2-4 անչափահաս երեխաներ կան, բոլորը, բացառությամբ Գնել Հովհաննիսյանի, Արթուր Ղազարյանի եւ Արսեն Երիցյանի, նախկինում դատված չեն եղել եւ «դրական բնութագրեր ունեն»:

Տես ► էջ 2

ԹԵՔԵՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Լեւոն Մկրտչյանը ԹՄՄ նոր նախագահ

Արտահերթ համագումար նորաբաց կենտրոնում

Դեկտեմբերի 12-ին Երեւանի Թեքեյան նորաբաց կենտրոնում տեղի ունեցավ այդ միության արտահերթ համագումարը, որը կազմկոմիտեի հանձնարարությամբ բացեց եւ վարում էր ավագագույն պատգամավորներից Կաուլեն Դալլաֆյանը: Վերջինս նշեց, թե ԹՄՄ կանոնադրությունը նախատեսում է այսպիսի արտահերթ համագումարների գումարման հնարավորություն: Այս անգամ, ավաղ, այդպիսի անհրաժեշտություն է առաջացել ԹՄՄ նախկին նախագահ, մեծահամբավ ու մեծավաստակ մշավորական Ֆրունզե Դովլաթյանի մահվան կապակցությամբ: Համագումարը մեկ րոպե լռությամբ հոշակայս հարգեց մեծանուն արվեստագետի հիշատակը:

Մանդատային հանձնաժողովի նախագահ Համլետ Դալլաֆյանի զեկուցումից պարզվեց, որ ԹՄՄ կանոնադրության համաձայն, մեկ ամիս առաջ հանրապետության բոլոր տարածաշրջաններում գտնվող Թեքեյան կազմակերպություններում ու կրթօջախներում տեղի են ունեցել արտահերթ համագումարի պատգամավորների ընտրություններ. Ընտրվել է 110 պատգամավոր, որոնցից համագումարին ներկա էին 88-ը:

Օրակարգում կազմակերպչական հարցեր էին՝ ԹՄՄ նոր նախագահի եւ ԹՄՄ կենտրոնական վարչության նոր կազմի ընտրություններ:

ԹՄՄ նախագահի պաշտոնում առաջադրվեց եւ բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանը:

Տես ► էջ 2

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

«Մ. Մաշտոց» եւ «Մ. Խորենացի» առաջին շրջանաւարտները մշակույթի մի խումբ գործիչների

երեկ կառավարության ընդունելությունների տանը հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը կատարեց, ինչպես ինքը նշեց, իր սահմանդրական ամենահաճելի պարտականությունը՝ մեր անկախ պետականության առաջին պարգեւները հանձնեց արվեստի, մշակույթի եւ գիտության 19 անվանի գործիչների: Նախագահի «Մեսրոպ Մաշտոց» շրջանաւարտ եւ դիպլոմ ստացան Գոհար Գասպարյանը, Կարպ Դոնբաեւը, Օհան Դուրյանը, Գոհար Գասպարյանը, Հրանտ Մաթեւոսյանը, Տիգրան Մանսուրյանը, Սիեր Մկրտչյանը (հետմահու) եւ Սոս Սարգսյանը: Իսկ «Մովսես Խորենացի» շրջանաւարտին արժանացան Մկրտիչ Ներսիսյանը, Ֆրունզե Դովլաթյանը (հետմահու), Տիգրան Լեհի Վարդերեսյանը, ինչպես նաեւ... Արթուր Գրիգորյանը:

Շրջանաւարտները գնահատման, ասաց նախագահը, վաստակը, պրոֆեսիոնալիզմը եւ տաղանդն են: Չպետք է էժանացնենք մեր պետական պարգեւները եւ պարգեւատրումը պետք չէ վերածենք հավուր պատշաճի միջոցառման: Չպետք է անտեսվի որեւէ արժանավոր, իսկ, մյուս կողմից, պետք է խստիվ արգելք դնենք միջակությունների առջեւ: Ինչ վերաբերում է մասնավորականության դերին, նախագահը ընդգծեց մեկ բան արժեքների ստեղծումը՝ մանդրական ամենահաճելի պարտականությունը՝ մեր անկախ պետականության առաջին պարգեւները հանձնեց արվեստի, մշակույթի եւ գիտության 19 անվանի գործիչների: Նախագահի «Մեսրոպ Մաշտոց» շրջանաւարտ եւ դիպլոմ ստացան Գոհար Գասպարյանը, Կարպ Դոնբաեւը, Օհան Դուրյանը, Գոհար Գասպարյանը, Հրանտ Մաթեւոսյանը, Տիգրան Մանսուրյանը, Սիեր Մկրտչյանը (հետմահու) եւ Սոս Սարգսյանը: Իսկ «Մովսես Խորենացի» շրջանաւարտին արժանացան Մկրտիչ Ներսիսյանը, Ֆրունզե Դովլաթյանը (հետմահու), Տիգրան Լեհի Վարդերեսյանը, ինչպես նաեւ... Արթուր Գրիգորյանը:

Յելմազը հրաժարվեց ճաշկերույթից, իսկ Թուրքիան՝ վեհաժողովից

12 ԴԵԿՏԵՄԲԵՐ, RFI, BBC. Լյուքսեմբուրգում տեղի ունեցող եվրամիության գագաթաժողովում եվրախորհրդարանի նախագահ Ժիլ Ռոբլեսը հայտարարեց, թե Թուրքիան չի բավարարում եվրամիության որոշակի քաղաքական եւ ժողովրդավարական չափանիշներին: Նա մասնավորապես մատնանշեց քաղաքացիական իրավունքների ոտնահարումը եւ հիշեցրեց, որ Թուրքիան բռնազավթել է Կիպրոս կղզու հյուսիսային մասը: Իսկ գագաթաժողովի «տանտերը»՝ Լյուքսեմբուրգի վարչապետ Ժան Կլոդ Ժիլբերը հայտարարեց. «Թուրքիան շարժվում է եվրամիության ուղղությամբ, սակայն Անկարայում պետք է գիտենան եւ գիտեն, որ ԵՄ-ի կազմում ընդգրկվելը կախված է մի շարք պարտավորությունների կատարումից: Մեր երկրների հասարակայնությունը եւ անձամբ ես մտահոգված եմ Թուրքիայում մարդու իրավունքների վիճակով: Այդ իմաստով Թուրքիան չի կարելի համեմատել 11 այլ թեկնածուների հետ, որտեղ կտրանքներ չեն կիրառվում: Իսկ Թուրքիայում, ավաղ, կիրառվում են»: Ի պատասխան Թուրքիան հայտարարեց, թե բոյկոտի կենթարկի Լոնդոնում հաջորդ տարվա գարնանը նշանակված եվրոպական վեհաժողովը, իսկ վարչապետ Մեսուտ Յըլմազը, ի նշան բողոքի, մերժեց եվրամիության ղեկավարների ճաշկերույթին մասնակցելու հրավերը:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Հավանություն լիսաբոնյան որոշումներին «թեհրանյան» տեսակետով հանդերձ

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ
Թեհրան

Դեկտեմբերի 11-ին, երեկոյան ժամը 9:30-ին փակման արարողությամբ Թեհրանում աշխատանքներն ավարտեց Իսլամական համաժողով կազմակերպության եոթներորդ 8-րդ գագաթաժողովը՝ հրապարակելով երկու կարեւոր փաստաթղթեր.

ա) Պաշտոնական հաղորդագրություն, որն ընդգրկվում է գագաթաժողովի վավերացրած բանաձեւերը: 56-րդ բանաձեւը վերաբերում է ղարաբաղյան հիմնահարցին՝ «Հայաստանի ագրեսիան ընդդեմ Ադրբեջանի» վերնագրով, որով արտահայտվում է Իսլամական համաժողով կազմակերպության դիրքորոշումը հիշյալ հարցի նկատմամբ: Այն միանգամայն հավանության է արժանացնում 1996 թ. ԵԱՀԿ-ի լիսաբոնյան որոշումները, ինչպես նաեւ Մինսկի խմբի դիրքորոշումը, պահանջելով դուրս բերել գրաված տարածքներից:

բ) Գագաթաժողովն ընդունել է նաեւ հռչակագիր, որի 8-րդ կետը կրկին վերաբերում է հայ-ադրբեջանական հակամարտությանը հետեւյալ ձեւակերպումով. «Իսլամական երկրները **մերժում են (rejection)** Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի նկատմամբ, **կոչ անելով (call on-**ընդգծումը փաստաթղթինն է) Հայաստանին դուրս բերել բոլոր ուժերը գրավյալ ողջ տարածքներից, ինչպես նաեւ ուսումնասիրություն կերպով խաղաղասիրական ճանապարհով լուծել երկու երկրների հակամարտությունը»: Թեեւ ոչ բոլոր բանաձեւերն են արտացոլված հռչակագրում, սակայն ԼՂՀ-ի վերաբերյալ կետի ձեւակերպումը թվում է, թե ավելի մեղմ է:

Տես ► էջ 5

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒՏՅՈՒՆ

Լեւոն Մկրտչյանը ԹՄՄ նոր նախագահ

Սկիզբը էջ 1

Պրն Լեւոն Մկրտչյանը հայության բոլոր շրջանակներում լայնորեն հայտնի բանաստեղծական է, հատկապես հայ միջնադարյան պոեզիայի խորագիտակ մասնագետ, հմուտ թարգմանիչ ու գրականագետ, հայ մշակույթի անխոնջ պրոպագանդիստ մանավանդ ռուսական միջավայրում:

ԹՄՄ նոր նախագահը ծնվել է 1933 թ., Վրաստանի Ախալցխա քաղաքում, 1936-54 թթ. ապրել է Բաքումում, 1952-54-ին սովորել է Բաքումի ծովագնացության ուսումնարանում: 1954-ից տեղափոխվել է Երեւան, ուր 4 տասնամյակից ավելի ծավալած բեղուն գործունեության շնորհիվ հասել է Երեւանի պետական համալսարանի պրոֆեսորի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսի բարձր աստիճաններին:

Լեւոն Մկրտչյանը մի քանի տասնյակ գրքերի եւ հարյուրավոր գիտական հոդվածների հեղինակ է, հայ դասական ճարտարգության բազմաթիվ հատորների կազմող ու ծանոթագրող: Նրա աշխատությունները թարգմանված են մեծ մասամբ ռուսերեն, նաեւ անգլերեն, որի շնորհիվ օտարները լայնորեն ծանոթացել են հայ գրականության մեծերին ու գրական հուշարձաններին, իսկ հեղինակը արժանացել է միջազգային ճանաչման:

Շնորհակալություն հայտնելով իրեն ցույց տրված մեծ պատվի՝ ԹՄՄ նախագահ ընտրելու համար, Լեւոն Մկրտչյանը համագումարին վստահեցրեց, որ կանի իր կարելիությունների առավելագույնը՝ ԹՄՄ առջեւ կանգնած խնդիրները արժանավորապես լուծելու եւ իր երջանկահիշատակ նախորդի կիսաս թողած գործը լավագույնս շարունակելու համար:

Այնուհետեւ նորընտիր նախագահի առաջադրությամբ համագումարն ընտրեց 33 հոգուց բաղկացած ԹՄՄ նոր վարչություն հետեւյալ կազմով.

Արամ Գրիգորյան, Ռոբերտ Մավիսակյան, Գագիկ Գալստյան, Ժորա Հարությունյան, Դավիթ Դովլաթյան, Լեւոն Հախվերդյան, Հենրիկ Միրզայան, Արա Մինասյան, Դոնարա Մարտիրոսյան, Կառլեն Դալլաքյան, Սերգեյ Գալստյան, Էդվարդ Միրզոյան, Անատոլի Գրիգորյան, Հարություն Կարապետյան, Ռուբեն Միրզախանյան, Հակոբ Ավետիսյան, Համլետ Կարապետյան, Սերգեյ Իսրայելյան, Համլետ Դալլաքյան, Վառլեն Ալեքսանյան, Վլադիմիր Հարությունյան, Սերգեյ Վարդանյան, Վարդուհի Վարդերեսյան, Լեւոն Կիրակոսյան, Սարգիս Սարգսյան, Հարություն Խաչատրյան, Մարիետա Մակարյան, Սուրեն Հասմիկյան, Ստեփան Ստեփանյան, Անահիտ Խալաթյան (Երեւանի «Թեթեյան» կրթահամալիր), Արսեն Օհանյան (Կարբիի «Թեթեյան» կրթօջախ), Անտոն Փիլոյան (Գյումրիի «Թեթեյան» կրթօջախ), Քաջիկ Միքայելյան (Գորիսի մասնաճյուղ):

Պատվավոր անդամներ՝ Հայկաշեն Ուզունյան (Թեթեյան մշակութային միության հիմնադիր անդամ), Վարդգես Պալյան (ԱՄՆ եւ Կանադայի Թեթեյան մշակութային միության կենտրոնական վարչության նախագահ):

ՈՍԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հեյդար Ալիեւը հայ ժողովրդին է դիմել երկու հանրապետությունների «առողջ ուժերը» միավորելու կոչով

ԹԵՐՍԱ, 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. «Ես հայ ժողովրդին եմ դիմում կոչով՝ միավորել առողջ ուժերը եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության հաստատման համար: Այս մասին ի պատասխան հայկական ռադիոյի լրագրողի հարցի հայտարարել է Թեհրանում գտնվող Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը: Նա հայտարարել է. «Ես անչափ շատ բան եմ արել Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ես անչափ շատ բան եմ արել հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար: Հայաստանում ես շատ բարեկամներ ունեի: Լեռնային Ղարաբաղում ես մեծ հարգանք էի վայելում: Եվ այս ամենն այն պատճառով, որ ես կարծում էի եւ հիմա էլ կարծում եմ, որ մեր բախտը տնօրինել է այնպես, որ մենք պետք է ապրենք կողք կողքի՝ դրկիցներ»: Ըստ նրա, հարեւանները պետք է միշտ հարբեն եւ տարածայնությունները, եւ մանր վեճերը, անգամ մեծ սկանդալները, եւ նույնիսկ բշնամությունը:

Ադրբեջանի նախագահը հայտարարել է, որ եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում առողջ ուժեր կան: «Ադրբեջանում ես կանգնած եմ առողջ ուժերի գլուխ եւ գտնում եմ, որ Հայաստանում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ճիշտ դիրք է գրավում», հայտարարել է նա: Իբրեւ դրա օրինակ, Հ. Ալիեւի կարծիքով, կարող են ծառայել Լ. Տեր-Պետրոսյանի վերջին հայտարարությունները, որ նա արել է մամուլում, թե հայկական, թե մոսկովյան: «Դա շատ խելամիտ մոտեցում է հարցի լուծման հանդեպ», գտնում է Հ. Ալիեւը: «Չէ որ ես ձեզ ասում եմ՝ մենք Հայաստանից ոչինչ չենք ուզում: Ոչինչ: Մենք համաձայնել ենք Լեռնային Ղարաբաղին ինքնավարության բարձր աստիճան տալ, ամենաբարձր աստիճան, էլ ի՞նչ են ուզում», եզրակացրել է Ադրբեջանի նախագահը:

ՀՐԱԺԵՇՏ

ՀՏԲ զգայուն տնօրինումին

ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության բաժնի տնօրեն տիկին Էնկու Կեբեդեն Հայաստանում էր ՄԱԿ-ի գրասենյակի հիմնումից ի վեր: Փխրուն կազմվածքով այդ զգայուն եթովպուհին ջերմորեն կապվել էր մեր երկրի, մեր մարդկանց հետ: Նա բազմաթիվ հանդիպումների ու միջոցառումների հովանավորը եղավ, նախաձեռնեց նաեւ Լրագրողների միջազգային օրվա առթիվ մրցանակաբաշխությունը, որի առաջին փուլի հաղթողները դարձան Կարինե Խոդիկյանը («Գարուն»), Վալերի Այդինյանը («Время»), Սառա Պետրոսյանը («Ազգ»): Երեկ, աշխատանքային առաքելության ավարտին, նա հրաժեշտի հանդիպման էր հրավիրել լրագրողներին: Տիկին Կեբեդեն թողնում է մեր մեջ միջազգային կազմակերպության արտասովոր աշխատակցի հետք, որին հրաշալիորեն հաջուկ են մարդկային գծերը:

Ա. Գ.

Ժամանակի հաշվարկումն առայժմ չի փոփոխվելու

ԵՐԵՎԱՆ, 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ըստ գանգվածային լրատվության որոշ միջոցների հաղորդագրության, Հայաստանի տարածքում ժամանակի հաշվարկման փոփոխությունը տեղի էր ունենալու իբր ս.թ. դեկտեմբերի 14-ին, ժամը 02.00-ին: ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից հայտնում են, որ այդ հաղորդագրությունը չի համապատասխանում իրականությանը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակի հաշվարկման կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ժամանակի հաշվարկման փոփոխությունը տեղի կունենա հիշյալ օրենքը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակման օրվանը հաջորդող կիրակի օրը՝ ժամը 02.00-ին, որի մասին բնակչությանը կտեղեկացվի լրացուցիչ:

Սկիզբը էջ 1

Արդարադատության նժարների «տարուբերումների» արդյունքում ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը, մեղավոր ճանաչվելով ՀՀ քրեական օրենսգրքի միաժամանակ երեք հոդվածով, ընդհանուր առմամբ «արժանացավ» 4 տարի ազատազրկման խիստ ռեժիմի ուղղիչ ափսանքային գաղութում (պատժի կրումը հաշվվում է 1995 թ. հուլիսի 29-ից), «Արաբոյի» հրամանատար Մանվել Եղիազարյանը, 5 հոդվածների զուգորդմամբ՝ 5 տարի ազատազրկման, նույն պայմաններում: «Հասարակական բացառիկ վտանգավորությունը եւ գործողությունների ծանրագույն հետեւանքները» հաշվի առնելով, դատարանը բացառիկ պատժաչափի՝ մահապատժի դատապարտեց Տիգրան Վարդգեսի Ավետիսյանին, որի ուսերին, ըստ դատավճռի, ծանրացած է պետական կարգի պահպանումը զինված դիմադրություն ցույց տալու, ծառայողական պարտականությունները կատարելիս ոստիկանների սպանության հանցանքը: Հաջորդ ծանրագույն պատժաչափերը «վաստակեցին» Գագիկ Կարապետյանը (որը մեղավոր ճանաչվեց միաժամանակ 6 հոդվածով), Արթուր Ղազարյանը եւ դատապարտվեցին 7-ական տարվա ազատազրկման ուժեղացված ռեժիմի ափսանքային գաղութում (Գնել Հովհաննիսյանը եւ Արսեն Երիցյանը (6-ական տարի, վերջին երեք դեպքերում հաշվի առնվեցին նաեւ նախկին դատվածության «պոչերը») Կարապետ Ղազարյանը եւ Աշոտ Ավետիսյանը խիստ ռեժիմի ափսանքային գաղութում ստիպված կլինեն անցկացնել հնգական տարի (մեղավոր ճանաչվեցին 5-ական հոդվածներով), 4-ական տարի հատել ՀՀ ԱԺ գարնանային համանելումը, նույնպիսի պատժաչափ «վաստակած» Գագիկ Գեւորգյանի եւ Օֆիկ Ասիկյանի նկատմամբ կիրառվեց պատժի հետաձգում 3 տարի ժամանակով:

Վագիֆ Ավետիսյանը, Արմեն Աղաջանյանը եւ Կարեն Կարապետյանը սարակությունից մեկուսացվելու արժանի համարվեցին ամբաստանյալներ Սերգեյ Հովհաննիսյանը եւ Սաշա Խաչատրյանը: Ուժեղացված ռեժիմի ափսանքային գաղութում 3-ական տարի ազատազրկման դատապարտվեցին վեց ամբաստանյալներ՝ Արկադի Սարդարյան, Կարեն եւ Մարտին Կարապետյաններ, Արմեն Ռուստամյան, Սուրեն Սահակյան, Տիգրան Ավետիսյան (պատժի կրումը հաշվվում է նախնական կալանքի պահից, որն անփոփոխ է մնում մինչեւ դատավճռի ի կատար ածումը, ինչպես եւ նախորդ թվարկված դեպքերում):

Նախնական կալանքի առնված եւս երեք ամբաստանյալներ՝ Նաիրի Մանուկյան, Հարություն Սարգսյան եւ Գագիկ Վանյան (վերջինս անպարտ ճանաչվեց ոստիկաններին դիմադրություն ցույց տալու հոդվածով), դատապարտվեցին ընդհանուր առմամբ երկու տարի 4-ական ամիս ազատազրկման, սակայն, հաշվի առնելով, որ արդեն կրել են իրենց «հաչը», ազատ արձակվեցին դատարանի դահլիճից: Երեք տարի ազատազրկման դատապարտվեցին Ադրանիկ Համբարձումյանի նկատմամբ հնարավոր համարվեց կիրառել ՀՀ Ա.Դ. զարնանային համանելումը, նույնպիսի պատժաչափ «վաստակած» Գագիկ Գեւորգյանի եւ Օֆիկ Ասիկյանի նկատմամբ կիրառվեց պատժի հետաձգում 3 տարի ժամանակով:

Վագիֆ Ավետիսյանը, Արմեն Աղաջանյանը եւ Կարեն Կարապետյանը դատապարտվեցին երկուական տարի ազատազրկման, սակայն համաներման շնորհիվ ազատվեցին պատժի կրումից: Մեկական տարի «ստացան» ամբաստանյալներ Գեւորգ Ղազարյանը եւ Գագիկ Ասիկյանը, որոնց պատժի կրումը հետաձգվեց համապատասխանաբար մեկ տարով:

Անպարտ ճանաչվելով, «31»-ի «ջրաղացից» մաքուր դուրս եկավ եւ արդարացվեց բացառապես Վաչագան Քոսյանը, որը մեղադրվում էր պատրաստվող գործողությունների մասին իմանալ չհայտնելու հոդվածով: Պատժի կրումից ազատված կամ պատժի հետաձգմամբ ամբաստանյալների «մեղքը» հիմնականում ապօրինի զենք եւ զինամթերք ձեռք բերելն ու պահելն էր: Երկու ամբաստանյալների գործ առանձնացված է եւ ընթացքի մեջ է:

Այսպիսով, գրեթե երկուսուկես տարի առաջ «սաղմնավորված» գործը հասավ, քաղաքական դատավարություններում թրծված փաստաբանների համոզմամբ, «անհրամարժեշտ, յնայտառավ՝ արդարացվելի, հասարակության համար վտանգավոր» վերջաբանի

ՀՅԴ հայտարարությունը դատավճռի մասին

Սույն թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ Գերագույն դատարանում ավարտվեց «Վահան Հովհաննիսյան+30» գործի դատավարությունը: Կայացված դատավճիռը, ինչպես եւ սպասվում էր, եղավ ավելի քան երկու տարի առաջ իջեցված քաղաքական պատվերի տրամաբանական ամփոփումը: Փաստորեն անկախ հորջորջվող դատարանը իր մեջ ուժ չգտավ դուրս գալու այն արտավոր ուղուց, որում իրենց վարկաբեկել էին արդեն նախաքննության մարմինն ու դատախազությունը՝ շինծու մեղադրանքների, ադաղակող հակասությունների պայմաններում կայացնելով քաղաքական հաշվարկի վրա կառուցված դատավճիռ: Մի հաշվարկ, որի հիմքերը դրվել էին դեռեւս 1994 թ. դեկտեմբերին՝ ՀՅԴ դեմ ծանրագույն մեղադրանքների հարուցումով: Հաշվարկ, որի ծնունդը եղան 1995 թ. հուլիսին ՀՀ բարձրագույն պետական մարմինների արած քաղաքական հայտարարությունները: Դրանց գլխավոր նպատակը քաղաքական մրցակից դիտվող Հայ յեղափոխական դաշնակցությանը, ամեն գնով եւ առանց միջոցների խտրության, ասպարեզից հեռացնելն էր:

Չնայած որ ամբողջովին թելադրանքի տակ գտնվող դատաիրավական մարմիններին այդպես էլ չհաջողվեց ՀՅԴ եւ նրա գործիչների դեմ դավադրորեն հյուսված կեղծիքը ճշմարտության տեղ հաստատել, այս դեպքում եւս, վճիռը կայացնելիս, ՀՅԴ նկատմամբ իշխանությունների որդեգրած քաղաքական կեցվածքը վճռորոշ գործոն հանդիսացավ: Հերթական անգամ ապացուցվեց, որ նույնիսկ Արցախի համար բախտորոշ այս շրջանում, ի դեմս Վահան Հովհաննիսյանի, Մանվել Եղիազարյանի, «Դրոշի» գործով դատապարտված Հրանտ Մարգարյանի եւ այլ ազատամարտիկների դեմ բռնարարքների ու մեկուսացումների, մեզանում հալածվում է արցախյան ազատամարտի գաղափարը, փորձ է արվում խաթարել եւ վարկաբեկել ազատամարտիկի կերպարը: Իրականությունը վկայում է, որ իշխանությունն այդպես էլ չկարողացավ իր նեղմտի քաղաքական խաղերից բարձրանալ ազգային շահերի գիտակցման մակարդակի, դադարեցնել քաղաքական հակառակորդների հետ բիրտ ուժի դիրքերից խոսելը, քաղաքական հայացքների համար հետապնդումները, պատանդի քաղաքականություն վարելով՝ քաղաքական հակառակորդին իրենց ցանկալի վարքագիծ պարտադրելը: Իշխանությունները այդպես էլ չգնացին համազգային համախմբման ճանապարհով, հիմքեր չստեղծեցին երկրում օրինականության ու ժողովրդավարության հաստատման համար:

Հայ յեղափոխական դաշնակցության Հայաստանի Գերագույն մարմինը դատապարտում է Հայաստանի իշխանությունների նման կեցվածքը եւ վճռականորեն հավաստում է, որ այսուհետեւ եւս շարունակելու է հետեւողական պայքարը հանուն իր իրավունքների վերականգնման, հանուն Հայաստանում օրինականության ու ժողովրդավարության հաստատման:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ

12.12.1997թ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

– Գլխավոր դատախազի այս հայտարարությունը համարում եմ խայտառակ եւ ահավոր: Կարծում եմ, որ դրա հետեւում կանգնած է հանրապետության ղեկավարությունը: Դա իրավական պետության դատախազի հայտարարություն չէ:

Թեյմուրազյանի գործի մասին ոչինչ չգիտեմ: Ճիշտ է, ինքս հետեւել եմ այդ գործին 1995-96 թթ. դատախազության միջոցով: Գուցե այստեղ խախտում կա, գուցեեւ չկա: Ի նով: Անհասկանալի է, թե այստեղ ինչու են աղմուկ բարձրացրել: Կամ դատախազը կատարում է հանրապետության ղեկավարների, ասենք, խորհրդարանի նախագահի կամ մեկ ուրիշի պատվերը, կամ էլ հենց իրենք են ինչ-որ բանից վախենում: Հետաքրքիր է, թե 5 նախկին վարչապետներից ինչո՞ւ որեւէ մեկը չպետք է վախենա, բացի ինձանից:

– Դուք մտադիր չե՞ք դատախազություն ներկայանալ ցուցմունքներ տալու համար:

Ինչո՞ւ պետք է ներկայանամ: Նրանց զանգից մեկ-երկու օր հետո ինձ վիրահատեցին: Երբ դատախազությունից թուղթը բերեցին, ներքեւում ինձ սպասում էր մեքենան, որպեսզի հիվանդանոց տանի: Չեք պատկերացնի, թե այս ամենը որքան անբարոյական է եւ հիշեցնում է 37 թ., երբ ձերբակալեցին Բուխարինին:

Իսկ եթե ուզում են ինձ հետ հանդիպում ունենալ, թող իրենք գան եւ հարցեր տան: Ես դեռ մի ամբողջ տարի հիվանդանոցային բուժման մեջ եմ լինելու:

Կարծում եմ, նրանք ինչ-որ բանից վախենում են: Նրանց գործերը վատացել են եւ արդարանալու բան չունեն: Նրանք ուզում են մարդկանց շեղել Ղարաբաղի խնդրից, իրավիճակի վատթարացումից:

– Պրն Բագրատյան, Դուք ինչպե՞ս կարձագանքեք, եթե դատախազը վճռի Ձեզ բերման ենթարկել դատախազություն:

– Ի՞նչ բերման ենթարկելու մասին կարող է խոսք լինել, եթե նրանք ինձ չեն դիմել եւ ինձնից մեռած չեն սպասել: Թող նա իր բոռներին բերի դպրոցից կամ մանկապարտեզից: Այդպես էլ գրեք:

– Իսկ եղե՞լ են արդյոք Ձեր կողմից Ձեր սեռադաս պաշտոնատար անձանց խախտումները կամ պաշտոնական դիրքի չարաշահումը քննելու դեպքեր:

– Իհարկե ոչ: Ընդհակառակը, նրանք են հիմա այդպես անում: Տեսեք, թե հիմա ինչ է կատարվում: Եթե մեզ մեղադրում են, թե սխալ հոգ տանելու մասին հարցեր տանք, նրանց աչքի առաջ կա օրինակ, երբ նվեր են տալիս գործարաններ, որոնք ենթակա չեն սեփականաշնորհման:

Ինչ վերաբերում է վարկերի օգտագործմանը, ոչ ոք չի գալիս վարչապետին հարցնելու, թե ինչպես է ընթացել այն: Առանձին վարկերի գծով խնդիրներ եղել են: Խորհրդարանի հանձնաժողովներից մեկի նախագահն իր ազգականներին գրանցել էր որպես խորհրդականներ, որի համար նրանք փող էին ստանում: Եվ մինչեւ օրս էլ նա շարունակում է այդպես աշխատել:

– Կարո՞ղ էիք նշել նրա անունը:

– Դա տնտեսական հանձնաժողովի նախագահն է: Թող դատախազը գնա նրա մոտ եւ հարցնի:

– Ինչպե՞ս եք գնահատում գլխավոր դատախազի այն հայտարարությունը, թե յուրահանչյուր վարչապետ բարոյական առումով պետք է պատասխանատվություն կրի իր պաշտոնավարության ընթացքում կատարվածի համար:

– Բարոյական առումով ամենքս պետք է պատասխանատվություն կրենք, սկսած առաջին հերթին նախագահից եւ վերջացրած ամենավերջին կոշկակարով, ներառյալ վարչապետը, այդ թվում նաեւ Խաչատրյանը:

Ես կարող եմ ասել, որ 1993-96 թթ. բոլոր ներդրումային վարկերի կամ Հայաստանի բյուջեի միջոցների գծով որեւէ դատական գործ չի եղել: Հայաստանն ԱՊՀ-ում այն հազվագյուտ պետություններից մեկն է, որտեղ ֆինանսական սկանդալներ չեն եղել: Իսկ հիմա ի՞նչ պատահեց: Նրանց կատաղեցնում է այն, որ ոմանք դարձել են Ազգությունների ժողովի անդամներ: Նրանց կատաղեցնում է այն, որ ոմանք դարձել են Ազգությունների ժողովի անդամներ: Նրանց տնտեսական զարգացման տեմպերը: Եվ մարդիկ սկսել են ինչ որ վատ զգացողություն ունենալ: Ամբողջ հարցը սա է, եւ այս ամբողջ աղմուկը կազմված է դրա հետ: Ես գտնում եմ, որ դա նողկալի քաղաքական քարոզչություն է:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանում «Ինտերֆաքսի» սեփական թղթակից

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հրանտ Բագրատյան. «Դա հիշեցնում է 37 թվականը, երբ ձերբակալեցին Բուխարինին»

Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի հետ հանդիպումը պայմանավորված էր դեկտեմբերի 10-ին կայացած մամլո ասուլիսում հանրապետության գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի այն սենսացիոն հայտարարությամբ, թե Բագրատյանին երկրորդ անգամ դատախազություն ներկայանալու ծանուցագիր է ուղարկվել, որպեսզի նա ցուցմունքներ տա Երեւանի նախկին քաղաքապետ Համբարձում Գալստյանի սպանության գործով եւ թեթեւ արդյունաբերության նախկին նախարար Ռուդոլֆ Թեյմուրազյանի այսպես կոչված գործով: Երկրորդ անգամ քանի որ առաջին անգամ նախկին վարչապետը չէր կարողացել ծանուցագրին արձագանքել հիվանդության պատճառով, երկու ամսվա ընթացքում երեք անգամ ենթարկվել էր սրտի եւ ողնաշարի վիրահատության: Բագրատյանի հետ հանդիպում ունենալով նրա «Ազատություն» կուսակցության կենտրոնակայանում, մենք խնդրեցինք մեկնաբանել վերոհիշյալ հայտարարությունը:

տալու համար:

Ինչո՞ւ պետք է ներկայանամ: Նրանց զանգից մեկ-երկու օր հետո ինձ վիրահատեցին: Երբ դատախազությունից թուղթը բերեցին, ներքեւում ինձ սպասում էր մեքենան, որպեսզի հիվանդանոց տանի: Չեք պատկերացնի, թե այս ամենը որքան անբարոյական է եւ հիշեցնում է 37 թ., երբ ձերբակալեցին Բուխարինին:

Իսկ եթե ուզում են ինձ հետ հանդիպում ունենալ, թող իրենք գան եւ հարցեր տան: Ես դեռ մի ամբողջ տարի հիվանդանոցային բուժման մեջ եմ լինելու:

Կարծում եմ, նրանք ինչ-որ բանից վախենում են: Նրանց գործերը վատացել են եւ արդարանալու բան չունեն: Նրանք ուզում են մարդկանց շեղել Ղարաբաղի խնդրից, իրավիճակի վատթարացումից:

– Պրն Բագրատյան, Դուք ինչպե՞ս կարձագանքեք, եթե դատախազը վճռի Ձեզ բերման ենթարկել դատախազություն:

– Ի՞նչ բերման ենթարկելու մասին կարող է խոսք լինել, եթե նրանք ինձ չեն դիմել եւ ինձնից մեռած չեն սպասել: Թող նա իր բոռներին բերի դպրոցից կամ մանկապարտեզից: Այդպես էլ գրեք:

– Իսկ եղե՞լ են արդյոք Ձեր կողմից Ձեր սեռադաս պաշտոնատար անձանց խախտումները կամ պաշտոնական դիրքի չարաշահումը քննելու դեպքեր:

– Իհարկե ոչ: Ընդհակառակը, նրանք են հիմա այդպես անում: Տեսեք, թե հիմա ինչ է կատարվում: Եթե մեզ մեղադրում են, թե սխալ հոգ տանելու մասին հարցեր տանք, նրանց աչքի առաջ կա օրինակ, երբ նվեր են տալիս գործարաններ, որոնք ենթակա չեն սեփականաշնորհման:

Ինչ վերաբերում է վարկերի օգտագործմանը, ոչ ոք չի գալիս վարչապետին հարցնելու, թե ինչպես է ընթացել այն: Առանձին վարկերի գծով խնդիրներ եղել են: Խորհրդարանի հանձնաժողովներից մեկի նախագահն իր ազգականներին գրանցել էր որպես խորհրդականներ, որի համար նրանք փող էին ստանում: Եվ մինչեւ օրս էլ նա շարունակում է այդպես աշխատել:

– Կարո՞ղ էիք նշել նրա անունը:

– Դա տնտեսական հանձնաժողովի նախագահն է: Թող դատախազը գնա նրա մոտ եւ հարցնի:

– Ինչպե՞ս եք գնահատում գլխավոր դատախազի այն հայտարարությունը, թե յուրաքանչյուր վարչապետ բարոյական առումով պետք է պատասխանատվություն կրի իր պաշտոնավարության ընթացքում կատարվածի համար:

– Բարոյական առումով ամենքս պետք է պատասխանատվություն կրենք, սկսած առաջին հերթին նախագահից եւ վերջացրած ամենավերջին կոշկակարով, ներառյալ վարչապետը, այդ թվում նաեւ Խաչատրյանը:

Ես կարող եմ ասել, որ 1993-96 թթ. բոլոր ներդրումային վարկերի կամ Հայաստանի բյուջեի միջոցների գծով որեւէ դատական գործ չի եղել: Հայաստանն ԱՊՀ-ում այն հազվագյուտ պետություններից մեկն է, որտեղ ֆինանսական սկանդալներ չեն եղել: Իսկ հիմա ի՞նչ պատահեց: Նրանց կատաղեցնում է այն, որ ոմանք դարձել են Ազգությունների ժողովի անդամներ: Նրանց կատաղեցնում է այն, որ ոմանք դարձել են Ազգությունների ժողովի անդամներ: Նրանց տնտեսական զարգացման տեմպերը: Եվ մարդիկ սկսել են ինչ որ վատ զգացողություն ունենալ: Ամբողջ հարցը սա է, եւ այս ամբողջ աղմուկը կազմված է դրա հետ: Ես գտնում եմ, որ դա նողկալի քաղաքական քարոզչություն է:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանում «Ինտերֆաքսի» սեփական թղթակից

Ստեղծվեց արհմիությունների անկախ դաշնություն

ԵՐԵՎԱՆ, 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դեկտեմբերի 12-ին Կինոյի տանը տեղի ունեցավ Հայաստանի անկախ արհմիությունների դաշնության հիմնադիր համագումարը: Այս փաստը Հայաստանի անկախությունից ի վեր արհմիութենական շարժման նշանակալից իրադարձություններից մեկը կարելի է համարել:

Դաշնության հիմնադրումը խթանեցին են հինգ՝ զանգվածային լրատվամիջոցների, փոքր եւ ինովացիոն ձեռնարկությունների, հրատարակչների, պոլիգրաֆիական ձեռնարկությունների եւ գրքի առեւտրի աշխատողների, Ռիալտորների եւ Ստեղծագործական խմբերի ու համերգասրահների աշխատողների արհմիությունները: Հիմնադիր համագումարին մասնակցում էին մոտ 70 պատգամավորներ, եւ հենց սկզբից նշենք, որ նորաստեղծ կազմակերպության նախագահ ընտրվեց Փոքր եւ ինովացիոն ձեռնարկությունների աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահ Վահագն Կարապետյանը: Հաստատվեցին նաեւ կազմակերպության կանոնադրությունը եւ համակարգը, որոնց մեջ կգործեն, մասնավորապես, աշխատանքի պաշտպանության, էկոլոգիայի եւ իրավաբանական, աշխատավորության սոցիալ-տնտեսական շահերի իրավական պաշտպանության, կուրորտների, էխսկուրսիաների եւ տուրիզմի բաժիններ եւ այլն:

ՀԱՅՊՐԵՍ

Հիմնադիր համագումարում մի շարք ելույթ ունեցողներ որպես նոր կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը հիմնավորելու առաջին փաստարկ էին բերում Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) ոչ արդյունավետ գործունեությունը: Պատվիրակների մեծ մասի կարծիքով ՀԱՄԿ-ն չի կարողանում լիարժեք գործունեություն ծավալել աշխատավորների շահերը պաշտպանելու ուղղությամբ:

ՀԱՄԿ-ն իր կազմում ընդգրկում է 26 տարբեր ճյուղային արհեստակցական միություն, ունի ՀՀ կառավարության հետ ստորագրած մի քանի պայմանագիր: Հայաստանի գործադիր իշխանությունների հետ ունեցած առնչություններ նույն ոչ միանշանակ էին ընդունվում անկախ արհմիությունների դաշնության հիմնադիրների կողմից: Օրինակ, նշվեց, որ կոնֆեդերացիան իր գոյության մի քանի տարիներին չկարողացավ հաստատվել, վերածվեց կառավարության կամակատարի:

Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի տնօրեն Մինաս Խաչատրյանը մասնավորապես նշեց, որ այսօր կառավարությունն ի զորու չէ լիարժեք օգնելու արհմիություններին, եւ ժամանակն է, որ արհմիությունների ունեցած հնարավորությունները, առաջին հերթին՝ ֆինանսները տնօրինեն իրենք՝ արհմիությունները: Ելույթ ունեցողները ընդգծում էին այն միտքը, թե՝ նոր անկախ կազմակերպությունը չպետք է կրկնի նախկին կառույցների սխալները, ոչ թե հաստ գրքարարությամբ զբաղվի, այլ կոնկրետ գործ անի:

«Միաբանություն» արհմիության նախագահ եւ ԱԺՄ անդամ Սեյրան Ավագյանը ցավով նշեց, որ արհմիությունները չեն կարողանում գտնել պրոբլեմների հիմնական աղբյուրը: Իսկ դա այն է, եզրակացրեց Սեյրան Ավագյանը, որ իշխանությունները սկսել են քանդել արհմիությունները: Նաեւ՝ Հայաստանում գործում է տնտեսական ավազակախումբ, որի դեմ եւ հիմնականում պետք է պայքարեն արհմիությունները:

Ելույթ ունեցան նաեւ Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչները, որոնք, ողջունելով նոր կազմակերպության ծնունդը, միաժամանակ նշում էին, որ գործունեությունը բնականաբար սկսելը ճիշտ չէ: Մանավանդ որ ներկա ծանր սոցիալական ու տնտեսական պայմաններում ՀԱՄԿ-ն փորձում է հնարավորը անել, կառավարության կամ ՀՀ նախագահի առաջ մի շարք պահանջներ է ներկայացնում աշխատավորների պայմանները բարելավելու համար՝ եւ այլն:

ՀԱՄԿ-ի եւ նոր ստեղծվող կազմակերպության միջեւ, ի վերջո, հետեւյալ լուսամածայնությունը կայացվեց՝ երկու կառույցները պետք է գործեն միմյանց լրացնելով, հնի եւ նորի միջեւ պետք է լինի մրցակցություն, որից կշահի արհմիութենական գործն ընդհանրապես:

ԼՈՂ

Ի նպաստ Արցախի դատի

Ամերիկայի հայկական համագումար հասարակական կազմակերպության հիմնադրման 25-րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը, որը տեղի է ունեցել այս տարվա սեպտեմբերին, որպես պատվիրակ մասնակցում էր նաեւ Արցախի պեհամալսարանի հումանիտար ֆակուլտետի դեկան տկն Արզիկ Մխիթարյանը: Վերջերս նրա անունով նամակ ստացվեց Միացյալ Նահանգներից, որտեղ Հայկական համագումարի ատենապետ Անի Թոքաիը մասնավորապես հայտնում է. «Մեր հասույթը այդ երեկոյին կազմեց 265 հազար ամերիկյան դոլար, որը կծառայի Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությանը: Ինչպես միշտ, Հայկական համագումարը գլխավոր պարտականություն է համարել օժանդակել Արցախի մեր քույրերուն ու եղբայրներուն հասնելու համար իրենց արդար դատին»:

Արցախի երեխաները կհանգստանան Հոլանդիայում

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարությունից տեղեկացնում են, որ 1998 թ.-ի հունվարի 18-ից մինչեւ փետրվարի 16-ը արցախցի 8-11 տարեկան տասը երեխաներ իրենց հանգիստն անց են կացնելու Հոլանդիայում: Նրանք չորս եւ ավելի երեխա ունեցող զոհված ազատամարտիկների զավակներ են:

«Ավո» գիրքը՝ ռուսերեն

Վերջերս վերահրատարակվեց ԼՂՀ հեռուստառադիոպետկոմիտեի նախագահ, լրագրող եւ հրապարակախոս Վարդգես Բաղրյանի «Ավո» գիրքը: Արցախյան ազատագրական պայքարի հերոսներից մեկի՝ Մոնթե Մելքոնյանի մասին այդ ակնարկ-հուշագրությունն առաջին անգամ լույս է տեսել 1993 թվականին: Գիրքը կազմված է վաստակավոր գրչակի նվիրման վրա, հրատարակվել է հայերեն 500, եւ առաջին անգամ ռուսերեն 1000 տպաքանակով:

ՎԱՀԲԻՍ ԱՎԱՅԱՆՅԱՆ

Ցույց Գյումրիում ի պաշտպանություն պաշտոնանկ փոխմարզպետի

Երեկ առավոտից Գյումրիում, Շիրակի մարզպետարանի շենքի առջեւ մարդկանց մեծ բազմություն էր հավաքվել, խոչընդոտելով նաեւ դիմացի փողոցի տրանսպորտի երթեւեկությունը: Հավաքվածները իրենց բողոքն էին հայտնում օրերս փոխմարզպետի պաշտոնից ԱԺ պատգամավոր Պետրոս Մակեյանի ազատման դեմ վեր պարզած պաստառներով ու վանկարկումներով պահանջելով բացատրություն եւ արդարություն: Կեսօրին մոտ ցուցարարների մի խումբ ներկայացուցիչների ընդունեց մարզպետարանի մեծ մասը եկել էին նախկինում պարոն Մակեյանի ղեկավարած Արթիկի ենթաշրջանի բնակավայրերից, բայց կային նաեւ Գյումրիի բնակիչներ: Մարզպետարանի դահլիճում կայացած բավականին հանգամանալից խոսակցության ընթացքում նրանք բոլորը Պ. Մակեյանին բնորոշեցին որպես իսկական ղեկավարի, իր հողին, ժողովրդին ու պետությանը նվիրված մարդու: Պահանջելով վերանայել ազատման որոշումը, որը, ըստ ոմանց արտահայտած կարծիքի, կայացված է ՀՀԾ-ում եւ Ազգային ժողովում Մակեյանի ընդդիմադիր դահլիճի հետ, ցուցարարների ներկայացուցիչները հակառակ դեպքում պայքարը շարունակելու վճռականություն հայտնեցին:

Մարզպետ Արարատ Գոմցյանը, չառարկելով փոխմարզպետին տրված գնահատականներին, միաժամանակ նրա ազատման որեւէ հստակ պատճառ չնշեց: Բայց ասաց, թե այսօրվա խոսակցությունն իրեն ընդունում է ի գիտություն եւ անհետեւանք չի մնա:

Դրանից հետո բողոքի ցույցը չշարունակվեց:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՈԱԿ-Ի ԽՕՍՔԸ

Ղարաբաղի հայութիւնը ճակատագրական հանգրուանի առջեւ

Ռամկավար Ազատական կուսակցության նախագահ Հայկաշեն Ուզունյանի կողմից հրատարակելու խնդրանքով խմբագրությանս ուղղված նամակի ուղեկցությամբ ստացված այս հայտարարությունը փաստորեն հանդիսանում է ՈԱԿ սփյուռքի շրջանակների մեծամասնության տեսակետը ղարաբաղյան հիմնախնդրի ներկա կացության եւ դրանից շահավետ դուրս գալու միջոցների մասին:

Ղարաբաղի կենսուդին հանդիսացող Լաչինի անցքին եւ պատմական Շուշիին, ադրբեջանցի գաղթականներու վերաբնակեցում, եւ Ղարաբաղի իշխանութեանց ենթարկում Բաքուի լուծին՝ Ադրբէջանի հողային ամբողջականութիւնը պահպանելու սկզբունքով: Այս բոլորին դիմաց Ադրբէջանը կը խոստանայ շատ անորոշ սահմանումով «լայն ինքնավարութիւն» շնորհել Ղարաբաղին, իսկ իր կարգին ԵԱՀԿ-ն կը հոստահովէ ու վերադարձուած հողերու վրայ կատարել միջազգային ուժերու տեղադրում: Հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին վճռած ըլլալով դառն գինը միջազգային նման խոստումներու եւ երաշխիքներու, չի կրնար անգամ մը եւս իր վիզը դնել ադրբէջանական սուրի տակ եւ նոր ցեղասպանութենէ մը ետ դարձեալ ապաւինիլ մեծ պետութեանց յաղաղած գութին:

Առաջին Աշխարհամարտին Հայկական Լեգէոնը իր արեան տուրքը տալէ ետ դաշնակիցներուն, երբ յաղթական մուսէ գործեց ան Կիլիկիա իր Ազգային օջախը վերահաստատելու իր պատմական մէկ հողամասին վրայ, դաշնակիցները բազում խոստումներով գինաթափեցին Հայկական Լեգէոնը՝ ետքէն թեմալական ջարդարար ուժերու դիմաց անպաշտպան թողելու համար իր օջախին մէջ վերսին համախմբուած հայութիւնը: Նոյնինքն Ղարաբաղի պարագային միեւնոյն դաշնակիցները համոզեցին Ղարաբաղի ղեկավարութիւնը, որ ժամանակաւորապես ընդունի Ադրբէջանի իշխանութիւնը՝ Սեւրի դաշնագրով վերսին տիրանալու համար իր ճակատագրին, դաւադիր պարտադրանք մը, որ եօթը տասնամեակ Ադրբէջանի դաժան լուծին տակ պահեց Ղարաբաղի հերոս հայութիւնը: Իսկ միջազգային ուժերու տեղակայման արժէքն ու նշանակութիւնը ծանօթ են համայն աշխարհին եւ որուն ծանր տուրք մը վճարած են բոլոր այն փոխզիջումները, որոնք իրենց տագնապին լուծումը յուսացած են գտնել նման ուժերու ներկայութեան մէջ, սակայն առաջին իսկ կրակոցին այդ ուժերը հեռացած են իրենց դիրքերէն, իրենց ճակատագրին թողելով ապազինեալ եւ անպաշտպան զանգուածները: Իսկ գալով Հէյդար Ալիեւի «լայն ինքնավարութեան» խոստումին՝ Սումգայիթի եւ Բաքուի ջարդերը տեսած եւ Նախիջեւանի հայաթափման վկայ եղած հայութիւնը հազիւ թէ կարենայ որեւէ հաւատ ընծայել անոր:

Այսօր Ղարաբաղի հայութիւնը իր արեան գնով տիրացած է իր անկախութեան եւ վաստկած է իր ինքնորոշման իրաւունքը: Ան կողմերէն մէկն է ներկայ տագնապին, որուն լուծում մը կը ջանան բերել ԵԱՀԿ-ն ու անոր ետին կանգնող քարիւղի միջազգային ուժերը: Հետեւաբար Ադրբէջանի իշխանութիւնները պարտաւոր են բանակցիլ Ղարաբաղի օրինաւոր իշխանութեանց հետ, եթէ կ'ուզեն համոզել միջազգային հանրային կարծիքը, թէ իրաւէս եւ անկեղծօրեն կը ցանկան խաղաղութիւնը հաստատել այդ աշխարհամասին վրայ: Միեւնոյն ժամանակ Ադրբէջան կրնայ իր քարիւղը վաճառել միջազգային հրապարակի վրայ՝ առանց մեծ պետութիւնները պատանդ դարձնելու Ղարաբաղի տագնապին:

Բովանդակ հայութիւնը այսօր, ի բոլոր սրտէ, կը պաշտպանէ Ղարաբաղի անկախութիւնը եւ միջազգային իրաւունքի արժանի անոր դիրքը:

Գալով ներհայկական ճակատին, ցաւալի է հաստատել, թէ միջազգային ճնշումի եւ սպառնալիքներու բերումով ան սկսած է աննեղաշնակութիւններ պարզել, հասնելով երբեմն վատաբարոյ վիճաբանութեանց: Հայութիւնն ամբողջ միակամ ու միասնական կերպով թիկունք կանգնեցաւ Ղարաբաղի հայութեան պատերազմի ճակատագրական օրերուն, այսօր խաղաղութիւնը նուաճելու պայքարին մէջ աւելի քան անհրաժեշտ է պահպանել այդ միասնականութիւնը, մինչեւ վերջնական յաղթանակ:

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեան ընդարձակ հարցազրոյց մը ունեցաւ Ղարաբաղի հարցին նուիրուած. նոյնպէս ան հրատարակեց սրցաւ այլ իրապաշտ յօդուած մը՝ «Լրջանալու պահը» յատկանշական ենթավերնագրով: Այս բոլորին նպատակն էր սկսիլ համազգային երկխօսութիւն մը կամ բազմախօսութիւն մը՝ յանգելու համար լուրջ ու ծանրակշիռ եզրակացութեան, թէ ազգովին ինչպէս պիտի դիմաւորենք վերահաս տագնապը: Ընդունելի տարազներ գտնենք նուազագոյն զիջումներով առաւելագոյն արդիւնքները ապահովելու միջազգային այն ժողովներուն, ուր պիտի որոշուի Ղարաբաղի ժողովուրդին ճակատագիրը: Դժբախտաբար, իր հունէն դուրս ելաւ համազգային այդ լուրջ խորհրդակցութիւնը եւ նոյնիսկ յանգեցաւ նաեւ անվայել վերագրումներու: Մենք դասապարտելի կը գտնենք այն երեւոյթը, ուր կարգ մը քաղաքական ուժեր փորձեցին ու տակաւին կը փորձեն այս ճակատագրական առիթը վերածել նախագահը նախատելու տխուր պայքարի մը, մոռնալով պահ մը, թէ նոյնինքն նախագահ Տեր-Պետրոսեանի օրով է, որ արձանագրուցաւ Ղարաբաղի պանծալի յաղթանակը: Նոյնպէս անտես առնելով այն իրողութիւնը, թէ իբրեւ մեր երկրի ճակատագրին գերագոյն պատասխանատուն ան կրնայ վերահասու ըլլալ տուեալներու, որոնք կը պակսին բանակցութեանց ծիրէն դուրս գտնուող բոլոր կողմերուն:

Մեզի համար մտահոգիչ երեւոյթ է նոյնպէս հրապարակային տարակարծութիւնը նախագահին եւ Ղարաբաղի իշխանութեանց, որոնք կը գտնուին տագնապին միեւնոյն կողմը եւ չեն կրնար գտնուիլ տարբեր դիրքաւորումներու վրայ: Կը սիրենք յուսալ, թէ նման տարակարծութիւններ բնոյթն ունին դեմոկրատական կարծիքի ազատութեան կամ կը միտին դիւանագիտական նուրբ մարտավարութեանց. այլապէս նման բեւեռացումներ կրնան միայն աղէտի մատնել մեր Դասը:

Միանգամընդմիշտ կը դատապարտենք այն միտքերն ու ամբաստանութիւնները, թէ նախագահ Տեր-Պետրոսեան զիջած է կամ կրնայ վտանգաւոր զիջումներ ընել Ղարաբաղի ժողովուրդին կամ անկախութեան հաշոյն: Ներկայ վէճին գլխաւոր խնդիրներէն մէկը կը հանդիսանայ այն հարցը, թէ տագնապին լուծումին պէտք է յանգիլ հանգրուանային փուլերո՞վ, թէ՞ փաթեթային ձեւով: Երկու պարագաներն ալ ներկայացուեցան բանակցութեան սեղանին վրայ եւ սակայն չհասան կիրակման փուլին: Հայկական կողմը կրնայ փուլային կամ հանգրուանային դրութեան համաձայնիլ միայն այն պարագային, երբ առաջին հանգրուանին ենթադրեալ եւ լուծուի Ղարաբաղի կարգավիճակը: Որովհետեւ, ազատագրուած հողերու վերադարձէն, աղազինեալ տարածութիւններու վրայ միջազգային ուժերու հաստատումէն ու Ղարաբաղի իշխանութեանց կողմէ Բաքուի գերակայութիւնը ընդունելէն ետք ի՞նչ բան պիտի պարտադրէ Ադրբէջանի իշխանութեան, որ որեւէ զիջում ընէ կամ որեւէ հարցի շուրջ համաձայնի: Ղարաբաղը զիջած պիտի ըլլայ հողամասս մը, որ գրաւած էր արեան գնով եւ որ կրնայ միայն զայն կրկին ձեռք ձգել նոր արիւնահեղութեամբ: Այս բոլորին ծանօթ են բանակցութեանց մասնակից միջազգային ուժերը, որոնք, սակայն, կը ջանան Ադրբէջանի կամքը պարտադրել Ղարաբաղի ժողովուրդին: Բայց այս բոլորին մասնաւորաբար ծանօթ է հայութիւնը, իր պատմութեան ընթացքին դաժան տուրք մը տուած ըլլալով նման դիւրահաւանութեանց:

Այս ծանր իրողութիւնները լուրջ պարտաւորութիւններ կը դնեն հայութեան բոլոր հատուածներուն վրայ: Միջազգային ուժերը պէտք է համոզուին Ղարաբաղի ժողովուրդի վճռակամութեան եւ մասնաւորաբար այն տրամաբանութեան եւ տրամադրութեան, թէ Ղարաբաղի ժողովուրդը ետքէն պարտադրուելիք ցեղասպանութեան մը զոհ դառնալէ առաջ պատրաստ է այդ նահատակութեան ենթարկուելու այսօր, երբ իր ձեռքին ունի իր զէնքերը ու կրնայ շատ սուղ գին մը վճարել տալ ցեղասպանութեան ախորժակ ունեցող բոլոր կողմերուն, տարհամոզելով զանոնք, թէ ուժի ճամբան չի կրնար դառնալ տագնապի լուծման միջոց: Յետոյ՝ միայն Հայաստանի բանալին է, որ կրնայ երաշխաւորել Ղարաբաղի ժողովուրդին ապահովութիւնը եւ ուրիշ ոչ մէկ ուժ: Մենք ամբողջութեամբ թիկունք կը կանգնինք Հայաստանի Հանրապետութեան նախագահին այն հաստատումին, թէ Ղարաբաղի ժողովուրդը երեք հազար տարի ապրած է իր սեփական հողին վրայ եւ ինչ համաձայնութիւն որ ալ կնքուի, պէտք է երաշխաւորէ որ Ղարաբաղի հայութիւնը պիտի շարունակէ ապրիլ իր սեփական միեւնոյն հողին վրայ:

Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ներկայ տարուան Հոկտեմբեր ամսուն կայացուց իր համագումարը, ուր որդեգրեց յատուկ բանաձեւ Ղարաբաղի հարցին շուրջ: Այդ բանաձեւը մասնաւորաբար կ'ուրագնէ Հայաստանի խորհրդարանի 1992 թ. որոշումը, թէ Հայաստան պիտի չստորագրէ որեւէ պայմանագրի տակ, ուր Ղարաբաղը կը նկատուի Ադրբէջանի մաս:

Սփիւռքահայութիւնը եւս ունի իր պատասխանատուութիւնը ներկայ ճակատագրական պահին. ճիշտ է թէ ան բերաւ իր նիւթական, բարոյական եւ քաղաքական օժանդակութիւնը Ղարաբաղի ազատագրութեան պատերազմին, խորհրդանշական կերպով մասնակցութիւնը բերելով նաեւ մարտադաշտին վրայ, երբ Ղարաբաղի հերոսական ժողովուրդն էր որ կը վճարէր արեան ամենէն սուղ գինը: Սփիւռքը աւելի եւս պէտք է բազմապատկէ իր նիւթական եւ բարոյական նեցուկը, սակայն առաջին հերթին պէտք է զօրացնէ իր քաղաքական գործունէութիւնը, մասնաւորաբար Արեւմուտքի այն երկիրներուն մէջ, որոնք վճռական դեր մը ունին տագնապի լուծման մէջ եւ կրնան ճակատագիրը որոշել Ղարաբաղի ժողովուրդին:

Բայց առաջին հերթին պէտք է վերականգնել ներքին միասնականութիւնը հայ ժողովուրդին՝ Հայաստանի մէջ թէ արտասահմանի ու մանաւանդ քաղաքականութիւն չխաղալ Ղարաբաղի ժողովուրդի ճակատագրին հաշոյն:

Հայ ժողովուրդը պատերազմի դաշտին վրայ տարաւ յաղթանակը իր միասնականութեամբ, միեւնոյն միասնականութեամբ պէտք է նուաճէ նաեւ խաղաղութիւնը:

ՈՍՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Սոնքրեայ

ԱՆՂՐԱԳԱՐԾ

Ղարաբաղը մեզ համար հայրենիք է

Սոսկովյան «Նովոյե վրեմյան» տպագրել, իսկ «Հայաստանի Հանրապետութիւնը» թարգմանաբար հայ հասարակության սեփականությունն է դարձրել իրեն «անցյալ դարավերջում աբդուլհամիդյան ցեղասպանությունից Ռուսաստան փախած հայ պատի թոռ» համարող ոմն Բորիս Տումանովի «Լեռներում աղաղակող ձայնը» հոդվածը, որն ունի նաեւ «Կանսա՞ն արդյոք Լեւոն Տեր-Պետրոսյանի խելամիտ կոչերին երկրում, ուր ամեն ոք իրեն մարգարե է համարում» ենթախորագիրը: Այս չափազանց հավակնոտ ենթախորագրի հեղինակը հենց իսկական «մարգարեի» կեցվածքով փորձում է դասեր տալ... հայ «առավելապաշտ», «հյուրասենյակային», «ազգայնական», «հանցավոր անհոգությամբ» տառապող, «Միջանցահովիկ» հայտնի սրճարանից իր քաղաքական մտածողության մեկնարկը վերցրած «խղճուկ» մտավորականությանը:

Որտեղի՞ց այսքան մաղձ հայ մտավորականության, թեկուզեւ «արմատական ընդդիմադիր» մտավորականության նկատմամբ, որտեղի՞ց այսքան թույն մի մարդու մեջ, որի պապը (բարեբախտաբար ոչ ինքը) հայ է եղել: Եվ ինչո՞ւ է այս մաղձն ու թույնը հավելյալ շրջանառության մեջ դրել «Հայաստանի Հանրապետությունը», ընդսմին առանց որեւէ մեկնաբանության, ինչը գալիս է հավաստելու, թե խմբագրությունը, միգուցե, համակարծի՞ է այս հայհոյաբանությանը: Ինչո՞ւ: Որովհետեւ վերոհիշյալ Բորիս Տումանովը ավելորդ կրքով պաշտպանում է ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի «Պատերազմ, թե՞ խաղաղություն» բանավիճային հոդվածի դրույթները, նրա հասցեին չխնայելով մեծարանքի արտահայտումներ. «Այն սթափությունը, որով Լ. Տեր-Պետրոսյանն իր հոդվածում խորհրդածում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի առաջադիմության մասին մեր ժամանակներում [illegible] պատասխանատվության գրագրությունը, որը նրա միտքը [illegible] բարձրացրել անձնական իշխանական շահերից, նրա հրավարակին տալիս են յուրաքանչյուր խրատանու համարձակության բնույթ բոլոր իրավիճակների համար...»:

Ամեն ոք սեփական կարծիքի իրավունք ունի, եւ եթե ՀՀ նախագահի խնդրո առարկա հոդվածի մասին պրն Տումանովի կարծիքն այս է, ապա դա, անշուշտ, նրա անձնական գործն է: Սակայն մի՞թե բարոյական է այդ կարծիքին չհամաձայնողների գլխին լուսանկարների հեղեղ թափելը, ինչպես վարվում է սույն պարոնը, զարմանալիորեն մոռանալով, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի «վեր բարձրացած միտքը» նույնպես իր սնունդն է ստացել երեւանյան լավ հայտնի «Միջանցահովիկ» սրճարանի «հայրենասիրական բանավեճերից», որոնք այդպա՞ն անթաքույց հեգնանքով մատնանշում է այս պասկվիլի հեղինակը:

Եթե բանը միայն այս լիներ, իհարկե, ամենեւին կարիք չէի համարի ուշադրության առնել հերթական բարբաջանքը: Բայց ցավն այն է, որ պրն Տումանովը բացահայտորեն զրպարտում է ոչ միայն անցյալ ու ներկա հայ քաղաքական գործիչներին, ընդդիմադիրներին, այլեւ նենգափոխում է պատմությունը:

Այսպես, միայն հայաստյաց որեւէ մեկ կարող էր ասել, թե հայերի «հանրային քաղաքական մտածողությունը վաղուց արդեն հիշեցնում է գոյություն ունեցող իրականության հողի մեջ արմատներ չունեցող օդասուն մշակաբույս», միայն թշնամին կարող էր պնդել, թե «հենց դա է հիմնարարաշնորհն այն, թվում է, անբացատրելի անպատասխանատվության, որով հայ պետական այրերը այս հարյուրամյակի ողջ ընթացքում Հայաստանը շարունակաբար նետել են իր համար կործանարար արկածախնդրությունների մեջ»: Լսո՞ւմ ես, հայ ժողովուրդ, քո բոլոր կորուստների, անդարմանելի մրմուռների պատճառը ոչ թե ցեղասպան թուրքն է, ոչ թե թեզանից դարերով քո հայրենիքը խլած թշնամիները, ոչ թե թեզ բազմիցս հուսախաբ արած Արեւմուտքն ու մշտապես քո թիկունքում քո հաշվին թշնամիներից հետ համաձայնության եկած ցարական կամ բոլշեւիկյան Ռուսաստանը, այլ քո իսկ զավակները, «հայ պետական այրերը»: Այսինքն դու ինքդ ես թեզ պատուհասել: Պարզվում է, ըստ պրն Տումանովի, մենք մի մե՞ծ «ոճրագործություն» ենք կատարել, երբ ցանկացել ենք «Թուրքիայից նվաճել 1920 թ. Սեւրի պայմանագրով Հայաստանին հանձնված տարածքները»: Բայց ի՞նչ տարածքներ էին դրանք, թուրքա՞ն, որ «պատեհաժամ» Արեւմուտքն ուզում էր «նվիրել» Հայաստանին, թե՞ ցեղասպանության հետեւանքով մեզնից վայրագաբար դատարկված ու անարգաբար խլված մեր պատմական հայրենիքը: Այս հարցը, ինչպես որ պատմության թուրքական նենգափոխողներին, այնպես էլ պրն Տումանովին, չի հուզում: Եվ նրա ուղեղն անգոր է ընկալելու, որ նույն Արեւմուտքի եւ բոլշեւիկյան Ռուսաստանի խարդավանքների հետեւանքով իրականություն չդարձած Սեւրի դաշնագիրը, միեւնույն է, եղել է, կա եւ մնալու է իբրեւ անհերքելի պատմական փաստաթուղթ հայոց պահանջատիրության միջազգային-իրավական արդարացիության վավերագիր, որը վաղ թե ուշ հրապարակ է գալու եւ, հակառակ ամեն տեսակ տումանովների վայնասունի, իրագործվելու է: Քանզի մարդկությունը հավերժորեն չի կարող ապրել ջունգլիների օրենքով, արդարությունը չի կարող հավերժորեն մերժված լինել քաղաքակրթությունից: Ճիշտ այդպիսի արդարության հասնելու պայքար է արգախյան գոյամարտը: Պրն Լեւոն Տեր-Պետրոսյանի բանավիճային հոդվածն ոչ այլ ինչ է, քան այդ արդարությանը հասնելուց հույսը կտրած [illegible] հայ մտավորականության հայ ժողովրդի բարգաւաճման ծառայության համար այսպիսի հուսախաբությունն անընդունելի է եւ Հայաստանում, եւ Արցախում եւ սփյուռքում: Ժողովուրդը համաձայն չէ այդպիսի տրամադրությունների, այս է ամբողջ վեճը, ուրիշ ոչինչ: Եվ միայն կյանքը ցույց կտա ժողովո՞ւրդն է իրավացի իր հավատի մեջ, թե՞ նախագահը իր հուսախաբության: Ուրեմն ի՞նչ կարիք կա փրփրաբերան հայհոյաբանության թե մեկ, թե մյուս կողմից: Սանձանցի՞, ինչո՞ւ զրպարտել ժողովրդին նախագահին ժամանակից շուտ արդարացի դուրս բերելու մղումով: Ինքը, նախագահը, կարծում եմ, շատ ուրախ պիտի լիներ, եթե պարզվեր, որ սխալվել է ինքը, եւ ոչ իր ընդդիմախոսները:

Եվ վերջինը: Հայաստանում արդեն շատ վաղուց ոչ ոք այլեւս չի մտածում, թե ահա-ահա «Ռուսաստանում իշխանության կգան կամ Զյուգանովը, կամ Բաբուրինը, կամ Լեբեդը, որոնք էլ, իբր, Հայաստանը կդարձնեն Կովկասյան Իսրայել եւ Լեռնային Ղարաբաղը կնվիրեն իրեն»: Այնպես կարող էր գրել հայ իրականությունից բացարձակապես անտեղյակ մեկը: Հայ ժողովուրդը վաղուց թոթափել է այդօրինակ պատրանքները, առավել եւս Ռուսաստանի վերաբերյալ: Մենք վաղուց մեր հույսը դնում ենք միայն մեզ վրա, մեր հավատի ուժի, մեր միասնության, մեր հայրենասիրության եւ արդարացիության վրա: Հայաստանը կարիք չունի որեւէ մեկի «նվերին»: Առավել եւս Ղարաբաղի հարցում: Քանզի Ղարաբաղը մեզ համար չի եղել եւ երբեք չի լինի որեւէ տեսակի «նվեր»: Ղարաբաղը հայրենիք է: Մենք ընդամենը ծնունդ տուն ենք թույլ չտալ, որ այն կրկին խլեն մեզնից եւ իրոք նվիրեն Ադրբեջանին, ինչը, հավանաբար, շատ ցանկալի կլիներ պրն Տումանովին: Բայց մենք ամեն կերպ կընդդիմանանք դրան, ով եւ ինչպես էլ ուզում է գազազի:

ՌԱՖԻԿ ՏՈՒՏՈՒՆՋՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հավանություն միասնության որոշումներին...

Սկիզբը էջ 1

Բացի նշված փաստաթղթերից գագաթաժողովը հրաժարակել է նաեւ մի այլ փաստաթուղթ «Թեհրանյան տեսակետ» վերնագրով, որտեղ նշվում է, որ իսլամական երկրները հովանավորում են արտաքին ճնշման տակ գտնվող, գաղութային վիճակում հայտնված, օտարերկրյա տիրապետության տակ գտնվող ազգերի ազատագրական պայքարը եւ նրանց ինքնորոշման իրավունքը, միաժամանակ ընդգծելով նաեւ, որ անձեռնմխելի են համարում միջազգային ընդունված սահմանները: Դրույթներ, որոնք ըստ էության ինչ-որ տեղ հակասում են միմյանց: Գագաթաժողովի կողմից քաղաքական, տնտեսական եւ մշակույթի բնագավառներում ընդունված բանաձեւերի գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է իսլամական երկրների փոխհարաբերությունների սերտացմանը:

Հիշարժան է նաեւ այն հանգամանքը, որ Իրանի նախագահ Մոհամեդ Խաթամին գագաթաժողովի եզրափակիչ ելույթում, որտեղ կրկին քաղաքական հակադրությունների երկխոսության կոչ էր արվում, անդրադառնալով իսլամական երկրներում առկա թեժ կետերին՝ չհիշատակեց ղարաբաղյան խնդիրը:

Գագաթաժողովի մասնակիցների, այդ թվում ՄԱԿ-ի եւ ԻԻԿ-ի գլխավոր քարտուղարների՝ Կոֆի Անանի եւ Էզզեդին Ալ Արաֆիի գնահատմամբ՝ գագաթաժողովը կազմակերպվել է բարձր մակարդակով: Բացի այդ, հաճախ գնահատվում է որպես առ այսօր կայացած ամենաարդյունավետ գագաթաժողովը:

Իրանը լուրջ ջանքեր գործադրեց իսլամական աշխարհի միասնականությունն ամրապնդելու ուղղությամբ՝ չարձագանքելով Իսրայելի պաշտպանության նախարար Մորդեխայի ներկայությանը (Դաշնաթաժողովի ընթացքում) Թուրքիայում եւ վերջինիս վարչապետ Մեսուտ Յըլմազի վաղինգտոնում գտնվելու փաստին, ինչպես նաեւ Իրաքի դեսպանի դեկտեմբերի 10-ի հայտարարությանը, որի համաձայն նույն օրը Անկարան ավելացրել է իր զորքերի թիվը Իրաքի հյուսիսում: Դա էր վկայում գագաթաժողովի խոսնակ, Իրանի փոխարտգործնախարար Մոհամեդ Ջավադ Զարիֆի պատասխանը լրագրողներից մեկի հարցին՝ նշելով, որ «մենք այստեղ նպատակ չունենք դատապարտելու իսլամական երկրներին»: Այսուհանդերձ, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելն ի նշան բողոքի՝ գագաթաժողովի հավանությանն արժանացած որոշ բանաձեւերի դեմ, դեկտեմբերի 11-ին լքեց Թեհրանը: Նշենք նաեւ, որ գագաթաժողովի ընդունած բանաձեւերից մեկը վերաբերում է Կիպրոսի թուրքական համայնքին, այն տեղ է գտավել երկու փաստաթղթերում եւ հուշակագրում՝ սանձելով հետեւյալ ձեւակերպումը. «Մենք հովանավորում ենք Կիպրոսի թուրք մահմեդական համայնքի օրինական իրավունքների ձեռքբերումը»:

Լիբանանի նախագահի հանդիպումը Հ. Ալիեւի հետ

Իրանում գտնվող Լիբանանի նախագահ Էլիաս Հրաուին հանդիպում է ունեցել Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի հետ: Քննարկվել են երկկողմանի հարաբերությունները եւ երկու երկրների համագործակցությունը տնտեսական՝ նավթի ու գազի ասպարեզներում: Հ. Ալիեւը Ադրբեջան այցելելու պաշտոնական հրավեր է ուղղել Է. Հրաուիին: Առաջիկայում Լիբանանի արտգործնախարար Ֆարեզ Բուեյզը գործարարների պատվիրակության ուղեկցությամբ կայցելի Բաքու:

Միաժամանակ Լիբանանի նախագահը Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Արտակ արք. Մանուկյանի հետ հեռախոսազրույցում հավաստել է, թե Հ. Ալիեւի հետ չի քննարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը:

«ԵՐԵՎԱՆ»

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Սուլեյման Դեմիրել. Ժամանակն է, որ որոշ երկրներ խելքի գան

Դեկտեմբերի 11-ին Թեհրանում ավարտվեց Իսլամական համաժողով կազմակերպության 8-րդ գագաթաժողովը: Դրա արձագանքները, սակայն, շարունակվում են: Առավել եւս շարունակվում են գագաթաժողովի ավարտից մեկ օր առաջ իր ծրագիրն ընդհատելու եւ Անկարա վերադառնալու նախագահ Սուլեյման Դեմիրելի որոշման արձագանքները, տեղի տալով տարաբնույթ մեկնաբանությունների: Դրանք միանշանակ չեն: Բոլորովին միանշանակ չեն գագաթաժողովին Դեմիրելի մասնակցության եւ արդյունքների գնահատականները: «Ճշմարիտ ուղի» կուսակցության նախագահ Թանսու Չիլլերի կարծիքով, գագաթաժողովը ակնհայտորեն ցույց է տվել, թե Թուրքիան ինչպես է օտարվում իսլամական աշխարհից: Մինչդեռ պետնախարար Ահաթ Անդիջանը, որ Թեհրանում թուրքական պատվիրակության հետ առանց Դեմիրելի շարունակեց մասնակցել գագաթաժողովի աշխատանքներին, շեշտը դրեց ոչ թե Թուրքիայի օտարման, այլ իսլամական աշխարհի պառակտման փաստի վրա: «Գագաթաժողովում, ասաց նա, արաբական երկրները միասնաբար հանդես եկան: Չեւավորվեց համարաբական բլոկ: Դա թուրքալեզու որոշ հանրապետությունների, ինչպես նաեւ Հարավարեւելյան Ասիայի երկրների ներկայացուցիչների դժգոհությունն առաջ բերեց: Վերջիններս, ելնելով արաբական երկրների միասնական բլոկի ձեւավորման փաստից, համարժեք քայլեր ձեռնարկելու պահանջով ինձ դիմեցին»:

Ինչ վերաբերում է Սուլեյման Դեմիրելին, ապա նա դեկտեմբերի 11-ին Ստամբուլում հերթական անգամ շրջանցեց գագաթաժողովը լքելու խորհուրդը, որն ընդգծելով արաբական միասնական բլոկի դեմ համարժեք քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, փաստորեն ակնարկեց Իսլամական համաժողովը պառակտելու թուրքական «առաջադրանքի» մասին: Դրա լավագույն միջոցը թուրքալեզու հանրապետությունների եւ Հարավարեւելյան Ասիայի երկրների համախմբումն է Թուրքիայի շուրջ:

Կհաջողվի՞ թուրքերին արաբական բլոկին համարժեք բլոկ ստեղծել, դժվար է ասել: Սակայն միանշանակ է, որ թուրքերը կարող են նպաստել Իսլամական համաժողովի պառակտմանը: Թեեւ դրանով կխորանա Թուրքիայի մեկուսացումը տարածաշրջանում եւ կսրվեն նրա հակասությունները այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Իրանն ու Սիրիան, սակայն փոխարենը հերթական անգամ նա կկարեւորի իր տեղն ու դերը ԱՄՆ-ի քաղաքական ծրագրերում: Սա կարեւոր հանգամանք է պաշտոնական Անկարայի համար: Ավելի քան կարեւոր է Միջին Արեւելքում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներկայությունը: Դրա պահպանման ու ամրապնդման տրամաբանությունը ենթադրում է միջինարեւելյան երկրների տարանջատվածության խորացում: Ահա թե ինչու Թուրքիան, հանձին Դեմիրելի, տարածաշրջանում մեկուսացման սպառնալիքին պատասխանում է իր անմիջական հարեւաններին սպառնալով, եւ, անտեսելով մեկուսացումը, առաջ է քաշում Իսլամական համաժողովի պառակտման Անդիջանի տարբերակը:

Նախագահ Սուլեյման Դեմիրելի ակնարկը պատահական չէ, ոչ էլ պետնախարար Ահաթ Անդիջանինը: Բոլորովին պատահական չեն իսլամական 8-րդ գագաթաժողովի նախաշեմին Հյուսիսային Իրաքում ռազմական գործողությունների դիմելու Անկարայի գործելակերպը: Այդ գործողություններն սկսեցին դեկտեմբերի 5-ին: Իսկ դեկտեմբերի 8-ին, երբ Դեմիրելը Թեհրան էր մեկնում, Անկարա ժամանեց Իսրայելի պաշտպանության նախարար Յիցխակ Մորդեխայը: Մինչ Թեհրանում Իսլամական համաժողովի շրջանակներում քննարկվում էին թուրքական զինված ուժերի ներխուժումը Հյուսիսային Իրաք, ինչպես նաեւ թուրք-իսրայելական ռազմական համագործակցությունը դատապարտող երկու բանաձեւի նախագծերը, Թուրքիայի պաշտպանության նախարար Իսմեթ Սեզգինը իսրայելցի գործընկերոջ՝ Մորդեխայի հետ բանակցություններ էր վարում երկու երկրների ռազմական համագործակցությունը ռազմավարական համագործակցությամբ ամրապնդելու շուրջ: Ահա թե ինչու դեկտեմբերի 10-ին հայտարարվեց, որ թուրքական զինվորական մի պատվիրակություն պատրաստվում է Իսրայել մեկնել ստորագրելու ռազմավարական բնագավառում թուրք-իսրայելական համագործակցության պայմանագիրը: Ավելին դեկտեմբերի 11-ին, երբ Թանսու Չիլլերն ահազանգում էր իսլամական աշխարհից Թուրքիայի օտարման վտանգի մասին, թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիա-ԱՄՆ-Իսրայել համատեղ զորավարժություններն Արեւելյան Միջերկրականում անցկացվելու են հունվարի 5-10-ը:

Պաշտոնական Անկարան չէր կարող չիմանալ իսլամական աշխարհի, առավել եւս տարածաշրջանի երկրների վերաբերմունքը թե Հյուսիսային Իրաքում թուրքական զինված ուժերի ռազմական գործողությունների, թե թուրք-իսրայելական ռազմական համագործակցության եւ թե Թուրքիա-ԱՄՆ-Իսրայել համատեղ զորավարժությունների նկատմամբ: Հակառակ գագաթաժողովը լքելու Դեմիրելի արարքի գնահատականին, այդ վերաբերմունքը միանշանակ է: Միանշանակ է նաեւ արաբական երկրների համախմբվածության բացասական ազդեցությունը Միջին Արեւելքում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներկայության վրա: Իրաքյան վերջին ճգնաժամը ցույց տվեց, որ արաբական երկրները համախմբվում են, իսկ դա նախադրյալներ է ստեղծում իսլամական աշխարհի հետագա համախմբվածության համար: Դրա կանխարգելումն այսպիսով ԱՄՆ-ի համար դառնում է կենսական խնդիր: Նա իր ուշադրությունը բեւեռում է Թուրքիայի վրա: Այս պայմաններում, եթե Դեմիրելը գագաթաժողովն է լքում, ապա Անդիջանը Իսլամական համաժողովի պառակտման առաջադրանքով հանդես է բերում արաբական բլոկակշռելու նախաձեռնությունն որպեսզի պառակտումը համաժողովի հարթությունից հնարավոր լինի տարածել իսլամական ողջ աշխարհի վրա:

ՎԱՀԱՆ ՅԱՍԱՐՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Բոնները բացում է իր պատմության նոր էջը

Բոնների ամենահայտնի արտադրանքը ժելատինե արջուկները կազմում են ընդամենը 2 գրամ: Ամեն օր Haribo ձեռնարկությունը թողարկում է 70 մլն արջուկ, որոնք մնացած խաղցրավենիքների հետ ձեռնարկությանը բերում են տարեկան 2 մլրդ դոյչ մարկի շահույթ: Haribo հաղավման տակ դժվար է կռահել Hans Riegel Bonn անունը, որն աշխարհին հայտնի է դարձնում ոչ միայն ձեռնարկության հիմնադրի, այլ նաեւ նրա հարազատ քաղաքի անունը: Ահա բոննական համեստության տիպիկ օրինակ, համեստություն, որը նույնանում է ոչ թե խեղճության, այլ հզորության հետ:

40 տարի շարունակ Բոնը եղել է ֆեդերալ հանրապետության մայրաքաղաք, սակայն ժելատինե արջերի պես նա եւս ըստ արժանվույն չի գնահատվել: Ֆրանկֆուրտցիները եւ բերլինցիները 300000 բնակիչ ունեցող այս քաղաքը կատակով անվանում են «ֆեդերալ գյուղ»: Ինչ-որ իմաստով քաղաքի հանդարտությունը, դղյակները ու վիլլաները, 70-ականներին կառուցված կառավարական շենքերն այդ տպավորությունն են թողնում: Բոնը ամենաերիտասարդ եվրոպական մայրաքաղաքն էր, գուցե նաեւ ամենահամեստն ու չերեւացողը, սակայն մի մայրաքաղաք, որ ընտրվել է ամենադեմոկրատական ճանապարհով: 1949-ի նոյեմբերին Բունդեսթագը 21 ձայնով քվեարկեց Բոնի օգտին, հակառակ Ֆրանկֆուրտի: Նույն կերպ 1990 թ. այդ կարգավիճակը փոխանցվեց Բեռլինին: Սա Բոնի համար անտանելի ցնցում էր, թեպետ Բոնի բնակիչները սովոր են պատմության կտրուկ շրջադարձերին հոմեցիների ժամանակներից սկսած մինչեւ ֆրանկերի արշավանքը, արեւելյան ֆրանկերի եւ կուրֆյուրստների դղյակաշինությունը, ֆրանսիական հեղափոխական ջոկատների ժամանումը: Բոնի քաղաքապետ տկն Դիկմանը լավատեսորեն է տրամադրված «Ի տարբերություն ճգնաժամային այլ շրջանների, մենք ունենք նպաստավոր պայմաններ եւ միջոցներ, ինչպես նաեւ ազդեցիկ մարդիկ, որ ամեն կերպ պատրաստ են սատարելու մեզ»: «Նոր» Բոնի հիմնադրումը նշանավորվեց 1999-ին Բոնի եւ Բեռլինի միջեւ կնքված փոխհատուցման պայմանագրով, որի համաձայն այս երկու քաղաքները պիտի կիսեն «աշխատանքը»: Չնայած միջնորդությունների մեծ մասը տեղափոխվում է Բեռլին, այնուամենայնիվ նրանցից վեցը մնում են Բոնում, միաժամանակ 13 ֆեդերալ կառավարություններ եւ կազմակերպություններ հաստատվելու են այստեղ: Բեռլինի օգտին հանված որոշումը Բոնի համար նշանակում է 20000 աշխատատեղի կրճատում: Ինչ վերաբերում է արտադրությանը, չնայած Hanbo-ի եւ իր արջուկների, այն ընդհանուր գբաղվածության միայն 15 տոկոսն է կազմում:



Ընդհանրապես Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի հողերում բնակչության 60 տոկոսը աշխատում է ծառայությունների ոլորտում: Համակարգում տեղաշարժ անելու համար ֆեդերալ պետությունը հատկացրել է 2,8 մլրդ դոյչ մարկ: Բոնում նոր ոլորտներ զարգացնելու համար ստեղծված հատուկ վարչությունը մշակել է զարգացման հինգյուսնանի մոդել: Առաջին սյունը՝ Բոնը ֆեդերալ քաղաք, բխում է Բոնի իբրեւ Գերմանիայի երկրորդ քաղաքական կենտրոնի նշանակությունից: Հաջորդը՝ իր միջազգային դերից: Այստեղ են գտնվում զարգացման եւ համագործակցության ֆեդերալ մինիստրությունը, ինչպես նաեւ զարգացման ուղիների հետազոտման հյուսիս-հարավ կենտրոնը: 1996-ին ՄԱԿ-ի երկու կառույց ժնեւից տեղափոխվեց Բոն: Երրորդ սյունը հետազոտությունն ու գիտությունն է: Չորրորդը՝ ապագային ուղղված քաղաքի տնտեսական զարգացումը: Եվ հինգերորդը՝ կյանքի մակարդակը եւ պայմանները: Սրանցից առավելապես կարեւորվում են չորրորդն ու երրորդը:

1991-96 թթ. ժամանակահատվածում 15000 աշխատատեղ է ստեղծվել շնորհիվ այստեղ հաստատված ապահովագրական ծառայության, Դոյչ Տելեկոմի, ինֆորմատիկայի եւ զանգվածային լրատվամիջոցների ոլորտում գործող 500 ձեռնարկությունների: Բեռլին տեղափոխվելուն դեմ ուղղված սպիտակ, կապույտ ապիները դեռ կախված են քաղաքում: Բայց մյուս կողմից առանց այդ տեղափոխության երբեք չէր բացվի Բոնի պատմության նոր էջը:

«Դոյչլանդ»

Պատրաստեց Ի. ՍԱՐԳՍՅԱՆԸ

ԱԶԳ

Մշակույթ

Արթուր Ութմազյանն իր սերնդի իդեալների մարմնավորողն է

Երբ արհեստն ու հանդիսատեսը համընթեր են անցնում իրենց կյանքի ճանապարհը, մշտապես պահելով միմյանց իրենց հոգեւոր դաշտի ծիրում՝ գեղեցիկ եւ գնահատանքի խոսքն ասելու արժանի երեւույթ է: Հենց նման խոսքն եմ ցանկանում ասել (չմիտքվելով թատերագիտական նեղ վերլուծության ոլորտը, ինչն, անշուշտ, մասնագետների խնդիրն է) Արթուր Ութմազյանի մասին: Անուն, որ իր անդրանիկ ստեղծագործական տարիներից բեւեռեց իր վրա լայն հանդիսատեսի, եւ հատկապես իր սերնդակիցների ուշադրությունը: Ուսանող էր տակավին, բայց արդեն սիրված ասմունքող: Նույն տարիներին՝ հեռու եւ մոտիկ 70-ականների սկզբին, նույնպես ուսանողուհի, վարում էի Երեւանի Մյասնիկյանի շրջկոմի կոմերիտմիության մշակույթի սեկցիան: Բուռն եւ շատ հետաքրքիր շրջան էր Մյասնիկյանը, քանի որ դրա տարածքում էին գտնվում քաղաքի գրեթե բոլոր բուհերը: Այն տարիներին բնորոշ երիտասարդության ինչպիսի՞ եռուն առօրյայով էր բաբախում Մյասնիկյանի շրջանը, այսօր դժվար է պատկերացնել նրանց, ով ինքը չի սուզվել, մասնակից չի եղել երկար տասնամյակների՝ կրթության, ուսման ծարավով, բազում հնարամիտ եւ հետաքրքրաշարժ միջոցառումներով, վայելուչ ժամանցով գերհագեցած այդ կյանքին: 70-ականներին հանրապետության բուհական իրականության մեջ Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի որոշմամբ ստեղծվեց եւ արմատավորվեց մի նախաձեռնում, որ երկար տարիներ ստանձնեց իր վրա ողջ մի սերնդին մշակութորեն կրթելու գործառույթը: Դա «Ուսանողական գարուն» ամենատարի փառատոներն էին: Մասամբ եւ հենց այդ հարցով էր զբաղվում Մյասնիկյանի շրջանի մշակութային սեկցիան, որի առաջնային խնդիրներից էր կազմակերպել եւ անցկացնել հիշյալ «Ուսանողական գարուն» փառատոները, որոնք յուրաքանչյուր տարվա ապրիլ-մայիս ամիսներին ցնցում էին քաղաքն իրենց բազում միջոցառումներով, միջբուհական մրցույթներով, քաղաքի պուրակներում եւ տեսարժան վայրերում անցկացվող հանդիսություններով, լավագույն համերգային բեմերում (Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճը ներառյալ) համերգներով, որոնց ժամանակ դահլիճը մշտապես լեփ-լեցուն էր լինում:

Ընթերցողին կարող է թվալ, որ շեղվեցի բուն նյութից, սակայն, ըստ իս, հակառակը՝ մոտեցա, գի, անհաշ, արվեստագետի համար կարեւորագույն գործոններից է իր սկզբի քայլերն ուղեկցող մթնոլորտը եւ այն միջավայրը, որում նա պիտի որպես այդպիսին իրականանա: Եվ այդ հիշյալ տարիների եռուն տարերքում թե փառատոնի կազմակերպիչներս, թե հանդիսատեսը չէինք պատկերացնում որեւէ կարեւոր, լուրջ միջոցառում առանց էստրադային բեմում նոր վերելքի ապրող մի անվան: Այդ անունը Արթուր Ութմազյան էր: Ինչո՞ւ: Արթուրը ինչ էլ ասմունքեր՝ Նարեկացի, Չարենց, Պ. Սեւակ, Ռ. Սեւակ, Հ. Սահյան, Վ. Դավթյան, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Եսենին, Եվտուշենկո, թե Վոզնեսենսկի՝ մե՛ր մասին էր եւ մե՛զ համար: Մեր, իր տարեկիցների հոգուց եւ սրտից էր բխում: Նրա կարդալու ոճը պարզ ու անպաճույճ էր (բառիս լավագույն իմաստով), սակայն եւ խորը, նրբազգաց, միշտ գերող ինտելեկտուալ մտայնազգացությամբ, խոսքի եւ բեմական կեցվածքի բացառիկ կուլտուրայով համակված: Շնորհներ, որոնց մեծ մասը, Արթուրը հիրավի ժառանգել է իր մորից՝ հայտնի դերասանուհի-ասմունքող Հրայուհի Ջինանյանից, յուրովի զարգացրել է եւ օժտել սեփական անհասականության ծիրով: Երբ ազդագրերում նշված էր լինում Արթուր Ութմազյանի անունը, անշեղը ադահովված էր Իսկ այդ (ինչպես եւ հետագա) տարիներին նրա մենաելույթներին դժվար էր տոմս ձարելը: Ուրի՞շ բան էր բերում իր հետ բեմ Արթուրը: Իր ժամանակի եւ իր սերնդի բազում իղձերի, այն է՝ հավատի առ գալիք մեծ ապագան (մոլորակի, երկրի, յուրաքանչյուրիս համար), երջանիկ, կենարար, ստեղծագործական սխրանքներով լի կյանքի, խաղաղության (բազմակի առումներով), մարդկային լայնածիր բարիդրացիական շփումների, պատանեկան առաջին սիրո թրթիռների, համակ լավատեսությամբ ներթաթախված հումանիստական գաղափարների մարմնավորողն էր նա: Մի ողջ սերնդի իդեալների կերպարանավորողը, թե իր ընտրած զտրյուն պոեզիայի նմուշներով (այն եզակիներից էր, որ երբեք «պատահական» գործ չէր կարդում), թե իր անմոռանալի ձայնելուէջներով, թե իր երիտասարդի եւ արտիստի ողջ նկարագրով: Եվ այս էր պատճառը, որ Արթուր Ութմազյանը առագընթացորեն հայտնի եւ սիրելի դարձավ բոլոր նրանց, ում հոգին բաց էր պոեզիայի քաղաքացիական եւ ճարտարական ծշմարիտ պաթոսին: Արթուրը զգալիորեն կերտեց իր սերնդակիցների ճաշակը պոեզիայի, ասմունքի անդաստանում, նրանով էին կողմնորոշվում եւ հաճախակի, սկսնակները իրենց համար պատիվ էին համարում ասմունքել այն, ինչը «Ութմազյանի ռեպերտուարից» էր: Այդպիսին էր Արթուր Ութմազյանի Սկիզբը: Բայց թող միամտորեն չթվա, որ այդ Սկզբում ընձյուղվում եւ իր ուրույն դեմքն էր ձեռք բերում միայն Ութմազյան ասմունքողը: Արթուրը համալսարանի բանասիրական բաժնի երկրորդ կուրսի ուսանող էր, հանրապետական մրցույթի դափնեկիր, երբ նրա ասմունքը լսելով, Հրաչյա Ղափլանյանը բերեց նրան թատերական միությանը կից գործող թատրոն-ստուդիա, որը հետագայում դարձավ մեծանուն ռեժիսորի անունը կրող երեւանի դրամատիկական թատրոն: Ղափլանյանը Արթուրին միանգամից երկու հետաքրքիր եւ սկզբի համար ոչ դյուրին դերեր վստահեց՝ Պիտեր Մյուլլերի «Սի բուռ մանրուք» եւ Կժիշտոֆ Խոինսկու «Գեղեցիկ պատմություն» ներկայացումների մեջ: «Իմ ինստիտուտը թատրոնն էր, ամեն ինչ այստեղ եմ սովորել, Հրաչյա Ղափլանյանից, մեծ ռեժիսոր էր: Լավագույն հատկություններից նաեւ այն էր, որ ոչինչ չէր պարտադրում դերասանին, այլ վստահում էր երիտասարդությանը», ասում է Արթուրը:

Եկող տարի, 1998-ին, լրանում է Արթուր Ութմազյանի դրամատիկական թատրոնում խաղալու 30 տարին: Եվ այդ 30 տարիների արտիստի ստեղծագործական ոսկե մատյանում են գրանցված 20-ից ավելի դերեր հայ, ռուս, արեւմտաեվրոպական դրամատուրգիայի երեւելի նմուշների, դրանցից լավագույնների համար ստացած դիպլոմներ, բազում հյուրախաղեր ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում, Քուվեյթում, Ավստրալիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում, Բուլղարիայում եւ այլուր, բարձր գնահատանքներով զետեղված անձնական գրադարանից, իսկական արտիստի ստեղծագործական նվաճումներով լի կյանքին հարիր ջերմագին դրվատանքի խոսքեր եւ ներկայացումներից հետո երկար չլռող ծափողջույններ: 30 տարի՝ Հայաստանի լավագույն, առաջատար թեմահարթակներից մեկում, որի գեղարվեստական ղեկավարն է տաղանդավոր ռեժիսոր Արմեն Խանդիկյանը, կերտել է Արթուր Ութմազյանը իր տասնյակ հերոսների այլազան կերպարներ, նրանց տղավորիչ, կենդանի գոյով «բնակեցրել է» թատրոնի բեմական կյանքը: Եվ որքան էլ մտադրություն չունենամ անդրադառնալու կերպարի իմաստային խորքը թափանցելու խնդրին: «Արթուր Ութմազյանը չափազանց հետաքրքիր արտիստ է, ասում է Արմեն Խանդիկյանը, հատկապես այն առումով, որ բազմակողմանի է: Ի՞նչ ասել է թատրոնում ունենալ «ամոլուա»: Ամոլուան, ըստ իս, տաղանդն է, տաղանդ յուրաքանչյուր դեր խաղալ յուրովի, չկրկնելով ինքն իրեն, ամեն նոր դերակատարման հետ նվաճելով ստեղծագործական նոր բարձունքներ, այդպիսին է մեր Արթուրը»:



Այո, այդպիսին է Արթուրը եւ նրա արվեստը: Եվ ոչ միայն այդպիսին: Դա ստույգ գիտեն հատկապես նրա սերնդակիցները, որոնք 30 տարի, տարավին երիտասարդական գարուններից համընթեր քայլում են արտիստի կողքին, նրա հետ, ովքեր յուրաքանչյուր անգամ դահլիճի բազկաթոռում ընկղմվելիս համակվում են Արթուրի խաղը ըմբռնելու նախազգացումով: Եվ երբեք հուսախաբ չեն լինում: Որովհետեւ գալիս են թատրոն ոչ միայն դիտելու Արթուր Ութմազյանի խաղը, այլ նաեւ հաղորդակցվելու մի անհատի եւ արտիստի հետ, որն իր ողջ մարդկային եւ ստեղծագործական նկարագրով ոչ միայն եղել է նրանց սերնդի լավագույն իդեալների մարմնավորողը, այլեւ հենց այսօր էլ շարունակում է պատվով կրել այդ առաքելությունը: Ի հեռուստ կյանքի բազում գեղեցիկ դժվարությունների՝ Արվեստին անշեղորեն ծառայելու իր նվիրաբերվածությամբ, դաժանացած առօրյայի մամլիչի տակ եւ այսօրվա ոգեզուրկ մեր հասարակական կյանքի բազում ծիրաններում Բեմի վսեմ ու գեղեցիկ հասկացությունը առնին իրականության եւ ոչ մի մանրադրամի հետ չփոխանակած: Այդ կերտ սնված եւ դաստիարակված մի ողջ սերնդի գաղափարների, հավատքի, իրականացած եւ չիրականացած իղձերի մարմնավորողը:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հարավսլավիա. Փոքր դաշնակահարուհու մեծ հաղթանակը

Հարավսլավիայի Նովի Սադ քաղաքում օրերս ավարտվեց կատարողների միջազգային մանկապատանեկան մրցույթը: Առաջին տեղի մրցանակի եւ ոսկե մեդալի արժանացավ Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի պրոֆեսոր Ալեքսանդր Գուրգենովի երկրորդ դասարանի աշակերտուհի Նարե Առզումանյանը:

Հայաստան. Համերգ «Զուգանվագ»

«Ինտելեկտուալների երաժշտության» միջազգային լիգան եւ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի եւ համագործակցության հայկական ընկերությանն առընթեր միջազգային երիտասարդական ակումբը, մայրաքաղաքի Սայաթ Նովայի անվան երաժշտական դպրոցում կազմակերպել էին «Զուգանվագ» խորագրով դասական եւ ժամանակակից երաժշտության ուշագրավ մի համերգ: Մասնակցում էին Անի Եղիազարյան, Սվետլանա Ավետիսյան եւ Ռաֆայել Գեւորգյան, Արթուր Իսրայելյան զուգանվագները: Հնչեցին Ալեքսանդր Սպենդիարյանի, Էդգար Հովհաննիսյանի, Էդուարդ Սաղոյանի, Հայկ Բոյաջյանի, Ռավելի, Միյոյի, Լյուտոսլավսկու ստեղծագործություններից:

Երեւանում հնչեց առաջին անգամ

Վերջերս, երբ Երեւանի «Սերենադ» կամերային նվագախումբը համերգային շրջագայությամբ գտնվում էր Շվեյցարիայում, տեղի երաժշտագետները նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Էդուարդ Թոփչյանին հորդորեցին «Սերենադի» նվագացանկում ներառել Ֆրանկ Մարտենի «Պավանան»: Ֆրանկ Մարտենը Շվեյցարիայի հայտնի կոմպոզիտորներից է, որի ստեղծագործությունները հնչում են ոչ միայն իր հայրենիքում, այլեւ աշխարհի բազմաթիվ երկրներում: Նշանավոր կոմպոզիտորի ստեղծագործության հետ հաղորդակցվելու առիթ ունեցան նաեւ Երեւանի երաժշտասերները: «Սերենադ» կամերային նվագախումբն իր հերթական ելույթով, որը տեղի ունեցավ մայրաքաղաքի կամերային երաժշտության տանը, առաջին անգամ Երեւանում կատարեց Ֆրանկ Մարտենի «Պավանան» որը, ինչպես եւ սպասվում էր, ջերմ արձագանք առաջացրեց: Հնչեցին նաեւ Ֆրանսիս Պուլենկի՝ երգեհոնի եւ նվագախմբի համար գրած կոնցերտը եւ Դմիտրի Շոստակովիչի կամերային սիմֆոնիան:

Երգեհոնի մենանվագը կատարեց Արթուր Ադամյանը: Նվագախումբը ղեկավարում էր Էդուարդ Թոփչյանը:

Հ. Ս.

ԱՄՆ

Հայտարարված է Գրիկերի անվան գրական երրորդ մրցույթը

«Ի՞նչ է ինձ համար մեզ ժառանգված հայկական ցեղասպանության նշանակությունը»: Այս թեման է առաջարկվել այս տարի Ամերիկայի երեք նահանգների Նյու Յորքի, Նյու Ջերսիի եւ Կոնեկտիկուտի ամերիկահայ դպրոցականներին «Սրտի եւ ցեղասպանության ուսումնասիրությունների ամերիկահայ ընկերության» կողմից:

Ընկերությունը, որը երրորդ տարին անընդմեջ կազմակերպում է էսսեների նման մրցույթ, ըստ «Արմինյան Միրոր Սփեթեյթր» շաբաթաթերթի տվյալների, հիմնադրվել է 1988-ին նպատակ ունենալով ավելի խորը հետազոտել եւ հասկանալ պատերազմների, ցեղասպանության եւ երկրաշարժերի վնասվածքային ազդեցություններն ու հետեւանքները տուժող սերնդի եւ նրա ժառանգների վրա: Առաջարկված թեման կարելի է մշակել, նշվում է հոդվածում, հոգեբանական, տրամաբանական, հասարակագիտական, փիլիսոփայական, մարդու իրավունքների եւ այլ տեսանկյուններից: Ներկայացված գործերը 1000-2000 բառերի սահմանում եւ անգլերեն լեզվով, չպետք է նախօրոք հրատարակված լինեն: Տպագրված որեւէ աղբյուրից կատարված մեջբերումների հղումը պարտադիր է: Աշխատանքների հանձնման վերջին ժամկետ է նշանակված 1998-ի փետրվարի 28-ը: Արդյունքները հայտնվելու են մինչեւ ապրիլի 24-ը: Նախատեսված է մեկ 100 եւ մեկ 250 դոլարի մրցանակ, համապատասխանաբար դպրոցական աշակերտների եւ ֆոլեջի ուսանողների համար:

Մրցանակները տրամադրել է հոգեբույժ դոկտ. Էդմոնդ Կերկերյանը ի հիշատակ 1988-ին մահացած իր հորեղբոր Հայր Գրիգոր Կերկերյանի (գրական ծածկանունով՝ Գրիկեր), որը երեխա ժամանակ ականատես է եղել իր ծնողների սպանությանը եւ ինքը մազապուրծ ազատվելով սպանդից, կյանքի մեծ մասը նվիրել է ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի ու վավերագրերի հավաքմանը: Շրջագայելով մի շարք արտասահմանյան երկրներ, նա տարբեր արխիվներից կարողացել էր հավաքել մոտ 80 տոկոսը այն նյութերի, որոնք հիմք պետք է հանդիսանային իր նախաձեռնած ուսումնասիրության: Նրա գործն այժմ շարունակում է Էդմոնդը՝ Սրտի եւ ցեղասպանության վերոհիշյալ ընկերության հովանավորությամբ:

Հ. Օ.

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

Պլակատների առաջին ազգային ցուցահանդես

Մարդու իրավունքները պաշտպանության ու աջակցության կարիք ունեն միշտ եւ ամենուր: Բայց միշտ չէ, որ դրանք հարգվում են ու հաշվի առնվում: Սակայն գոնե դեկտեմբերի 10-ին մարդու իրավունքները «պաշտպանված» են եւ «հարգված», քանզի ՄԱԿ-ը սույն օրը հռչակել է Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր: Այս օրվա առթիվ հանրապետությունում եւ մայրաքաղաքում տեղի ունեցան բազում միջոցառումներ: Դրանցից իր յուրահատկությամբ աչքի ընկավ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կազմակերպված պլակատների ցուցահանդեսը մրցույթը:

Ցուցահանդեսում ընդգրկված էին տարբեր հեղինակների ստեղծագործություններ պլակատներ, որոնք ներկայացնում էին մարդու իրավունքների, ազատությունների... վերաբերյալ պատկերներ:

Ցուցահանդես-մրցույթին ներկայացված ավելի քան 30 պլակատներից լավագույն ճանաչվեցին Դավիթ Հակոբյանի, Տիգրան Հայրապետյանի եւ Արամ Կյունուզյանի ստեղծագործությունները, որոնք դարձան առաջին կարգի հաղթողներ: Մրցանակակիրները պարգեւատրվեցին պատվոգրով եւ 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամական խրախուսանքով: Մրցույթում երկրորդ կարգի հաղթող ճանաչվեց Արթուր Մանուկյանը:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը եւ ցուցահանդեսի բացումը ուղեկցվեց երաժշտական կատարումներով:

ՎԱՐԴԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՊՀ ժուռնալիստիկայի բաժնի Վ կուրս

Մարզական

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

Երբ բարեկամանում են երեխաները, կրճատվում են տարածությունները

«Երեխաները մեր ապագան են», ասում է Իրանսիական Պա դե Կալե-Վանաձոր «մանկական կամուրջը»: Հայ եւ Ֆրանսիացի երեխաները միմյանց հյուրընկալվելով հարստացնում են իրենց գիտելիքները, ճանաչում աշխարհը:

Եվ ահա Ֆրանսիս Ռեմբոտի նախաձեռնությամբ, երեխաների վաղ սոցիալականացման «Կանաչ հարկ»-«Ծիածանային ոլորտեզ» հայ-ֆրանսիական կենտրոնի եւ Հայաստանի Հեծանվային մարզաձեւի Ֆեդերացիայի հետ համատեղ 1998 թվականի ամռանը մեր հանրապետության գեղատեսիլ լեռնային ճանապարհներով կընթանա բարեկամության բազմօրյա հեծանվարավը: Պա դե Կալեի, Վանաձորի եւ Երեւանի դպրոցականների մասնակցությամբ: Ի դեմ, մի քանի ամիս առաջ «Կանաչ հարկ»-«Ծիածանային ոլորտեզ» կենտրոնում բացվել էր «Հայաստանը ֆրանսիացիների աչքերով» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Ռեմբոտի լուսանկարչական աշխատանքները:

Ֆրանսիացի մանկավարժը 1998 թ.-ը համարում է մարզական տարի: Այս օրերին Ռեմբոտը դարձյալ երեւանում է: Նա իր հետ որոշ նվիրատվություն բերել է նորագույն VTT մակնիշի 16 հեծանիվ, որոնցով հայ երեխաներն իրենց ֆրանսիացի հասակակիցների հետ մեկ տեղ կմասնակցեն կայանալիք հեծանվարավին:

Ֆրանսիս Ռեմբոտը հանդիպեց Հայաստանի հեծանվային մարզաձեւի Ֆեդերացիայի նախագահ Մարատ Դանիելյանի, հանձնախմբի Ռուբեն Գեւորգյանի հետ: Պրն Գեւորգյանն ասաց, որ ամեն ինչ կարվի բարեկամության հեծանվարավի հաջողության համար: Նա նշեց, որ մինչ արավի մեկնարկը Երեւան ժամանած երեխաները կհյուրընկալվեն «Դվին» հյուրանոցում եւ հնարավորություն կունենան ծանոթանալու մայրաքաղաքի տեսարժան վայրերին: Հեծանվարավը աղահովված կլինի երեխաներին ուղեկցող տրանսպորտով եւ, իհարկե, ինչպես միշտ, հեծանվորդները կանգնելու են փոքրիկ ազնվության ամբիոնի մոտ, որտեղ նրանց կոչվելու է ոտքի կանգնել Ֆրանսիայի ազգային դրոշակը: Հայաստանի հեծանվային մարզաձեւի Ֆեդերացիայի նախագահ Ալոյս Կոնոյանը: Բազմօրյա հեծանվարավի ծրագրի համաձայն, մասնակիցները ճանապարհին գիշերելու են վրաններում, իսկ հնարավորության դեպքում հայ խոհարարները, որոնք ուղեկցելու են երեխաներին, նրանց համար համեղ ճաշատեսակներ կպատրաստեն:

Եվ այսպես, 1998 թ. հուլիսի 9-23-ը Ֆրանսիական Պա դե Կալե դեպարտամենտի 18, վանաձորցի 10 եւ երեւանցի 5 դպրոցականներ կուղեւորվեն Երեւան-Արմավիր-Գյումրի-Տաշիր-Վանաձոր-Դիլիջան-Սեւան-Մարտունի-Երեւան ուղերթով, որի ընդհանուր տարածությունը մոտ 700 կմ է:

Բարեգործական հեծանվարավը, անշուշտ, կգրավի այն հանդիսատեսների ուշադրությունը, որոնց տարածքով ընթանալու է երեխաների ուղին:

Բարեկամության հեծանվարավը հիշարժան էջ կդառնա ֆրանսիացի եւ հայ երեխաների կյանքում:

ԱԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԱՐՈՒՄ

Ն. Վահանյանն սկսում է գնդակի հարթանակով

Գոնիոգնիսում անցկացվող աշխարհի տանիսի առաջնությունում հանդիպեց Վահանյանը, որպեսզի մեր ծանոթ երկրորդ տրանսֆերը, մեծերով գնդակի հարթանակ տարավ Ոլորտեզի գրասենյակ: Հիշում ենք Ոլորտեզի նկատմամբ Ն.Վ. պատանեկան հանդիպումը: Ինչպես պատահական չի, Ն.Վ. դեռ ոչ մի տարի հետ չի գնացել Ոլորտեզ, իսկ հիմա նա գրասենյակ է մտել ինքնավստահ, ինչպես տանը: Լսելով, որ ոչ ոք չի կարող մի տարիքի, ոչ հանդուրժողական առաջարկ գրանցել, նա ինքնավստահ ասաց. «Ինձ հետ կարելի է խաղալ, ինչպես ուզում եք»: Ն.Վ. գրասենյակ ոտքի է փոխի հարթությունի հանվել երկրորդ պատանիներ, տղաներ:

Օրվա սանձկնդրվել է ժողովրդի խոշորներից մեկի՝ Ինանլուսի պատասխանը Մերաղանից, որ, ինչպես հայտնի է, առաջին փուլում «Մեզարդ էր» նաեւ Մեսրոպյանին: Սրան հանդիպումներում Մեսրոպը հաղթեց Նիկոլին, Միրոյի Գրաղարին, Ազատը Գիրգասին, Դարեջը Մարտունին, Սվիրդը Ազիանին, Լորին Գրաչեին, Հայկին՝ Նիբրոյին, Միրոյ՝ Կիսերեանին, Տիկրանը՝ Հոգեսարին, Սվ՝ Մոսչեւին, Կրասենկոյը՝ Գարգարին, Մեսրոպը՝ Միրոյին, Ս. Սոկոլովը Իսրայելյանին, Ի. Սոկոլովը՝ Նոյերին: Սրա մրցակիցների առաջին պարտությունն ավարտվեցին ոչ-ոքի:

Ս. Ա.

Դաջող օր հայ ախմաստիների համար

Աշխարհի ախմաստի պրոմոնկան առաջնության ընթացքի մասին նախորդ տեղեկությունը վերնագրել էինք «Սուսաց ոչ-ոքիներ»: Այսպես, հերթական տարի հետո, տեղի է «Սուսաց պատերազմ» արտահայտությունը: Հայ ախմաստիներից Գագիկ Սարգսյանը (14), Տիգրան Դաստակյանը (14), Տաթեւիկ Աբրահամյանը (10) հաղթանակներ տարան, իսկ Մերիկ Գալստյանը (12) եւ Արմեն Մեսիկյանը (10) ոչ-ոքի խաղացին: Նրա տարիքն հետո Սարգսյանը եւ Աբրահամյանը 3-ական միավորով ընթանում են առաջատարների խմբում:

Ս. Ա.

Օլիմպիական տարը հաստատում է...

Մասկվայի երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունն ու Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն ստեղծել են «Նպաստ 98» էջաթը, որտեղ պարբերաբար ճշտակվում են ձմեռային օլիմպիադային նախապատրաստվելու եւ մասնակցելու հարցերը:

Ինչպես հայտնեցին սպորտվարության տեղեկատվության բաժնից, էջաթի հերթական նիստում հաստատվեց օլիմպիական խաղերում Մասկվեն Գրիգորյան-Բենինա Ամերանենկո պարային զույգի մասնակցությունը: Օրերս գեղասահքի միջազգային ֆեդերացիան հաստատեց նրանց մասնակցությունը աշխարհի չեմպիոնների կոչման համար: Ի դեմ, հիշեցնենք, որ այդ զեղեցիկ երկրորդ փուլում նրա մասնակիցը կարող է լինել երեւանցի մյուս զրասավորդը՝ Վլադիմիր Ռանդրյանը:

Վլադիմիրը նաեւ առաջին պարտիան հանդիսացավ Ռ. Ռանդրյանի մասնակցությունը աշխարհի մասնակցությունը Գրենոբլում, որտեղ մեր ազգային հանդիսանալ Ռ. Ռանդրյանի զիվերներից մեկը հասավ երկրորդ հորիզոնական, սակայն երբ Վահանյանի զիվերներից մեկը հասավ երկրորդ հորիզոնական, սակայն նրանց հարցերը դարձավ անհասանելի, եւ մրցակցի տախտակին իրեն պարտված ճանաչեց:

Այսպիսով, եթե Վահանյանին հարցվի երկրորդ պարտիան, ուրեմն նա խաղում է սպիտակներով, սակայն թվում ոչ-ոքի, սակայն նա իրավունք կունենա շարունակել պարարտ աշխարհի չեմպիոնների կոչման համար: Ի դեմ, հիշեցնենք, որ այդ զեղեցիկ երկրորդ փուլում նրա մասնակիցը կարող է լինել երեւանցի մյուս զրասավորդը՝ Վլադիմիր Ռանդրյանը:

Վլադիմիրը նաեւ առաջին պարտիան հանդիսացավ Ռ. Ռանդրյանի մասնակցությունը Գրենոբլում, որտեղ մեր ազգային հանդիսանալ Ռ. Ռանդրյանի զիվերներից մեկը հասավ երկրորդ հորիզոնական, սակայն նրանց հարցերը դարձավ անհասանելի, եւ մրցակցի տախտակին իրեն պարտված ճանաչեց:

Ս. Ա.

1/4 եզրափակիչի վերջին խաղը

Անցկացվեց ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/8 եզրափակիչի բաց թողած «Բոխում» (Գերմանիա)-«Ալախ» (Հոլանդիա) պատասխան հանդիպումը: Առաջինը հաջողության հասավ «Ալախը»: Սակայն «Բոխումի» ֆուտբոլիստները կարողացան երկու գոլ խփել ու անցնել առաջ: Բայց ավելին անել նրանց չհաջողվեց: Ընդհակառակը, հոլանդացիները մեկ անգամ եւս գրավեցին մրցակցի դարպասը, եւ խաղն ավարտվեց ոչ-ոքի 2-2 հաշվով: Եվ քանի որ Ամստերդամում կայացած առաջին խաղում «Ալախը» հաղթել էր (4-2), առաջ նա էլ դուրս եկավ 1/4 եզրափակիչ: «Ալախի» գոլերից մեկն իր հաշվին գրանցեց վրաց ֆուտբոլիստ Հորա Ավալիանին: Ի դեմ, նա առաջին խաղում եւս մի անգամ այնի էր ընկել: Ընդհանրապես, հոլանդական ակումբի կազմում Ավալիանին բավականին արդյունավետ խաղ է ցուցադրում:

Հիշեցնենք, որ «Ալախից» բացի, հաջող փուլ են դուրս եկել «Սպարտակ» (Ռուսաստան), «Օսեր» (Ֆրանսիա), «Մարոն Վիլլա» (Անգլիա), «Սելտիկը» (Իսպանիա), «Հակի-04» (Գերմանիա), «Ինտեր» եւ «Լացիո» (Իտալիա) թիմերը:

Եվրոպական երեք գավաթների մրցումներում՝ Չեմպիոնների լիգա, ՈՒԵՖԱ-ի գավաթ եւ Գավաթակիրների գավաթ, 1/4 եզրափակիչ փուլի խաղերը կանցկացվեն 1998 թ. մարտ ամսին:

Ձեռնագնդակ. դժվար է կին մրցավար լինելը

Ինչպես հայտնի է, ձեռնագնդորդների խաղերում մրցավարները գործում են զույգերով: Աշխարհում միջազգային կարգի մրցավարների մեջ կան վեց զույգ կանայք: Ֆրանսիական միակ զույգը կազմում են Օդիլ Մարսեն եւ Սիլվի Բորոսսին: Ֆրանսիայի կանանց առաջին հավաքականի այդ նախկին խաղացողները հանգիստ կարող էին վարել Գերմանիայում անցկացվող ձեռնագնդակի աշխարհի առաջնության խաղերը, բայց այնտեղ կին մրցավարներ չեն հրավիրվում: Օդիլը եւ Սիլվին դրա համար շատ չեն տխրում, գտնելով, որ վաղ թե ուշ իրենց գնահատելու են ամենաբարձր մակարդակով:

Օդիլ Մարսեն (Ախից) եւ Սիլվի Բորոսսին

Նրանք միջազգային կարգի մրցավար դարձան այս տարվա ամռանը, բայց մրցավարական զույգ են կազմել յոթ տարի առաջ: Նման համատեղ աշխատանքի համար մտերմությունը եւ ընդհանուր հետաքրքրությունները պարտադիր են: Օդիլ Մարսեն «Էկիպ» թերթի թղթակցին, մասնավորապես, խոստովանեց. «Ես ու Սիլվին որոշեցինք զույգ կազմել, զգալով, որ հաջողության կհասնենք: Թե որպես մրցավար, եւ թե որպես խաղացող հարկավոր է խաղադաշտում սանձնել դիմացինի վերաբերմունքները, որպեսզի մեծ սխալ չլինի»:

Չնայած Ֆրանսիայի ձեռնագնդակի ֆեդերացիայի եւ հավաքականի աջակցությանը, Օդիլի եւ Սիլվիի մրցավարական կարիերան հարթ չի ընթացել, հանգի բարձր մակարդակի մրցումներում մարզասերները դժվարությամբ են պատկերացնում կին մրցավարի ներկայությունը: Մարդկանց մտայնությունը դանդաղ է փոխվում: Օդիլը Փարիզում մարմնամարզության դասատու է եւ մրցումների օրերին մշտապես սիրված է լինում բաց թողնել որոշ դասաժամեր: Վերադասները դժվարությամբ են դրան համակերպվում: Մրցավարական կարիերայի սկզբնական շրջանում պատահել է, որ մարզասերները բղավել են. «Գնացեք հյուսելու»: Օդիլը եւ Սիլվին այսօր ժպիտով են վերհիշում այդ օրերը: Սիլվին պատմում է, որ տղամարդկանց հավասարության խաղերը վարելիս թեեւ լինում են որոշակի դժվարություններ, բայց ընդհանուր առմամբ իրենց այնքան էլ կոպիտ չեն վերաբերվում: Մարզիչներից մեկը նույնիսկ խոստովանել է, որ կնախընտրեր կին մրցավարներ ունենալ, քանի որ խաղացողներն այդ դեպքում ավելի հիշ կզայրանային մրցավարների վրա: Տղամարդկանց առաջին դիվիզիոնի խաղերի մրցավարությունը համեմատաբար դյուրին է, թեեւ ոմանք դեռ ծիծաղելի են համարում կին մրցավարների ներկայությունը:

Այս ամենը չի խանգարում, որ Օդիլ Մարսեն եւ Սիլվի Բորոսսին շարունակեն իրենց ուղին: Նրանք 38 տարեկան են եւ կարող են մրցավարություն անել եւս 17 տարի: Թեեւ վստահ չեն, որ նույն զբաղմունքը կունենան մինչեւ 55 տարեկան հասակը, բայց առայժմ կարող են ասել, որ եկող տարվա փետրվարին մասնակցելու են Եվրոպայի կանանց ձեռնագնդակի առաջնության խաղերի մրցավարությանը: Օդիլն ու Սիլվին նաեւ մտադիր են մասնակցել Սիդնեյի օլիմպիական խաղերին:

Ղ. Բ.

ԱԶԳ
օրվա հետքով

ԵՐԵՎԱՆ

Մշակույթի դիվանագիտությունը կշարունակվի

Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի եւ համագործակցության ընկերությունը մշակութային հաղորդակցության կամ ժողովրդական դիվանագիտության իրական կրողը եղավ մեր վերջին դժվարին տարիներին: 1992-ից մինչեւ 97-ի նոյեմբերի ավարտը ընկերությունը կազմակերպել է շուրջ 544 միջոցառում՝ ցուցահանդեսներ, համերգներ, դասախոսություններ, հանդիպումներ օտարերկրյա մշակութային ոլորտների, պետական, քաղաքական, հասարակական գործիչների ու դիվանագետների հետ: «Նոան գույնը» ֆիլմի զգեստների էսքիզների ցուցահանդես՝ նվիրված Սայաթ Նովայի ծննդյան 280-ամյակին, հայկական ժայռապատկերներին նվիրված ցուցահանդես, հանդիպում Թբիլիսիի Աղամյանի անվ. հայկական թատրոնի խմբի հետ, երեկո՝ նվիրված Ախմատովային, Թումանյանի ծննդյան 124-ամյակին, Սենկեւիչին, պոնտյան հույների նկատմամբ իրագործված եղեռնի տարելիցին, ճապոնական արվեստի փառատոն եւ ճապոնական ավանդական խաղալիքի ցուցահանդես, միջոցառումների շարք՝ նվիրված Մեծ եղեռնի 80-ամյակին, հարավսլավացի գոհված օդաչուների ընտանիքների ընդունելություն, բազմաթիվ երկրների ազգային տոներին նվիրված երեկոներ... Այս ժամանակաշրջանում պարզ է դարձնում դրական գործունեությունը: Նման պատկերով ընկերությունն անցկացրեց իր 7-րդ կոնֆերանսը երեկ, կիրակի տանը:

Ընկերության մեջ ներկայումս ընդգրկված 45 հասարակական կազմակերպություններ (ՀԿ) այդ թվում՝ շուրջ 35 երկրների հետ երկկողմանի մշակութային կառույցներ: Սրանց մի մասն է միայն գրանցված արդարադատության նախարարությունում, մյուսները համարվում են սոնրաբաժանում: ՀԿ-ների մասին ընդունված օրենքը նշում է, որ միավորվելիս կազմակերպությունները պետք է հիմնեն միություն: Սա ըստ էության հանգեցնելու էր նրան, որ կոնֆերանսը սկիզբ էր դնելու նոր կառույցի: Այդ դեպքում, սակայն, բաց էր մնում չգրանցված կազմակերպությունների հարցը: Ուստի որոշում ընդունվեց վերադրեցնել ընկերությունը, իսկ միության կայացումը ձեռնարկել հաջորդ փուլում:

Մշակութային միության նոր կանոնադրությամբ ընկերությունը հավատարիմ է մնալու ժողովրդական դիվանագիտության իր նպատակին, պարզապես կկատարվեն ոճական փոփոխություններ, կընդարձակվեն գործունեության ուղղությունները: Ըստ պատասխանատու քարտուղար Հասմիկ Պողոսյանի, դրանցից մեկը կլինի ընդեղական օրինակով Հայաստանի ինստիտուտի ստեղծումը: Հայաստանի մասին պարբերաբար կպատրաստվեն տեղեկություններ եւ կառավեն արտերկրներ, ուր դրանց նկատմամբ մեծ հետաքրքրություն եւ պահանջ կա: Պատասխանատու քարտուղարի կարծիքով այն, ինչ չի ասվում պետական պատասխանների շուրթերով, կարող են ներկայացնել հասարակական կազմակերպությունները: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն մշակութային կյանքին: Ընկերությանը բազմաթիվ անգամ մեղադրել են, որ չեն ներկայացնում դարաբաղյան հարցը: Իսկ հանախ դրսում չեն տարբերակում Դարաբաղի ժամանակաշրջանի յուրահատկությունները: Այսուհետեւ յուրաքանչյուր բյուլետեն կունենա որոշակի թեմա, կպատրաստվեն տեսաերիզներ, ֆիլմեր: Ծրագրվում է նաեւ կարող հասցել արտերկրների գիտության, տնտեսության, շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող կազմակերպությունների եւ անհատ գործիչների հետ: Առաջիկա խնդիրների շարքում առանձնահատուկ կարեւորություն տրվեց երիտասարդների հետ աշխատանքին, արդեն իսկ գործող երիտասարդական ակումբի եւ հայ ուսանողների միջազգային կարգերի ընկերակցության միջոցով մասնակից դարձնել նրանց, համագործակցության զարգացմանը:

Պետական աջակցությունը դադարեցվել է, բայց հավանաբար կգտնվեն հնարավորություններ որոշակի ծրագրերի ֆինանսավորման համար: Կոնֆերանսի ներկայացուցչական կազմը եւ 121 հոգուց բաղկացած նորընտիր վարչությունը (այն չափազանց մեծ է, բայց հավանաբար շարունակում էր գործել ասրիբուտների երկրպագության հին մտայնությունը) կարծես հույս է ներշնչում, որ շատերն են շահագրգիռ ընկերության գոյության համար: ՀՀ մշակույթի նախարարի ներկայությունը, որն ըստ Հ. Պողոսյանի, իրենց կողմից է եղել մշտապես, դեռ այդ պատասխանին անցնելուց առաջ, պետական կառույցի հետ սերտորեն համագործակցելու հեռանկար էր խոստանում, որը չէր կարելի ասել նախկին ղեկավարության ժամանակաշրջանի մասին: Նրանք ի սկզբանե ժպիտով էին վերաբերվում ընկերության գոյությանը:

ԱՆՈՒՇ ՏԱՐԱՍՅԱՆ

ADANA
COMMERCIAL BANK

ԻՆՉՊԵՍ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

«Ադանա» բանկը հայտարարում է Հայաստան շտապ փոխանցումներ կատարելու ասպարեզում ծառայությունների ոլորտի ընդլայնման մասին: Այսուհետ 24 ժամվա ընթացքում ձեզ կարող են փոխանցումներ կատարել աշխարհի ցանկացած կետից եւ գործնականորեն Ռուսաստանի բոլոր տարածաշրջաններից՝ «Ադանա» բանկի, «Կրեդիտ-Մոսկվա» բանկի եւ Ռուսաստանի Արտաքին առեւտրի բանկի (Վնեշտորգբանկ) մասնաճյուղերի թղթակցական ցանցի միջոցով:

Մոսկվայից եւ Սանկտ Պետերբուրգից դրամական փոխանցումների իրականացման տոկոսադրույքը՝ 1%: Ռուսաստանի տարածքաշրջաններից տոկոսադրույքը՝ 1% կամ առնվազն 10 դոլար:

Ձեզ սպասում ենք հետեւյալ հասցեներով՝

Մոսկվայում՝ «Կրեդիտ-Մոսկվա» ԲԱԲ
Սոնետչիկովսկի 6-րդ նրբանցք, 8 (մետրոյի «Պավելեցկայա» կայարան): Հեռ. 237-55-93, 233-42-43
Սանկտ Պետերբուրգում՝ «Կրեդիտ-Մոսկվա», «Սանկտ-Պետերբուրգսկի» մասնաճյուղ
Սադովայա փող., 54 (մետրոյի «Սադովայա» կայարան):
Հեռ. 310-19-67, 310-13-69
Երեւանում՝ «Ադանա» բանկ
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Նալբանդյան 5:
Հեռ./Ֆաքս՝ +(885)39 07157, +(885) 2 585980
Տելեքս՝ (64) 243340 ADANA SU

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՑԱՆԿԸ

Սանկտ-Պետերբուրգ, Բոլշայա Մորսկայա փ. 29	հեռ. (812)	312-78-00
Բլագովեշչենսկ, Սովետսկիյ նրբ. 65/1	հեռ. (4162)	42-10-47
Խաբարովսկ, Մոսկովսկայա փ. 7	հեռ. (4212)	33-58-13
Վիբորգ, Կրեպոստնայա փ. 16	հեռ. (81278)	2-53-02
Նախոդկա, Շկոլնայա փ. 19	հեռ. (42366)	4-69-71
Նովոռոսիյսկ, Սովետների փ. 47	հեռ. (86134)	5-74-14
Սոչի, Կարլ Լիբկնեխտի փ. 10	հեռ. (8622)	92-73-35
Կրասնոյարսկ, Լենինի փ. 143	հեռ. (3912)	21-85-29
Իրկուտսկ, Ավերոլովի փ. 40	հեռ. (3952)	24-16-72
Ստավրոպոլ, Կոմինտերնի փ. 7	հեռ. (8652)	26-17-54
Կալինինգրադ, Բոլնիչնայա փ. 5	հեռ. (0112)	34-05-00

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը հայտարարում է մրցութային ընդունելություն կոնցերտային գծով օգնականի թափուր տեղի համար: Պահանջվում է նմանատիպ աշխատանքի երկարատեւ հոգ եւ անգլերեն լեզվի լավ իմացություն:

Դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն: Բաղրամյան 18 հասցեով, կադրերի բաժին:

Հեռ. 52-46-61, 52-16-11, մինչեւ հունվարի 15-ը:

Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի Ա. Խաչատրյան մեծ համերգասրահում, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի բարձր հովանավորությամբ եւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, 1998 թ.-ի հունվարի 3-13-ը կազմակերպվում են Ամանորյա եւ Սուրբ Ծննդյան աննախադեպ բարեգործական տոնահանդեսներ, նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին՝ զոված ազատամարտիկների ընտանիքների, հաշմանդամների, մանկատների, աղետի գոտու երեխաների համար:

Հրավիրատոմսերը ստանալ Հայաստանի պետական ֆիլհարմոնիայից. Երեւան, Խանջյան 13ա, հեռ. 56-71-02, 56-67-90:

Նվերները՝ Ա. Խաչատրյան համերգասրահում, տոնահանդեսների ժամանակ:

ՀԱՅՊԵՏՖԻԼՀԱՐՄՈՆԻԱՅԻ ՏՆՕՐԵՆ
Լ. Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բոլոր նրանց, ում հետաքրքրում են քաշի ավելացման եւ նվազման խնդիրները:

Փորձառու աշխատակցի խորհրդատվություն:

Զանգահարել 27-10-21, ժամը 19-22-ը:

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	մախս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 կվտ	2.5 կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 կվտ	3.0 կվտ	6.1 ժ	

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայրենակիցներ

Դեկտեմբերի 15-ին, ժ. 14.00-ին Ազատության հրապարակում տեղի կունենա ԼՂՀ հարցի արդարացի կարգավորմանը նվիրված ցույց եւ աղա երթ դեպի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության անդամ պետությունների դեսպանատներ: Եռանախագահության անդամ երկրների դեսպանություններին կհանձնվեն Արցախի հիմնահարցի վերաբերյալ հայության դիրքորոշումներն արտահայտող պահանջագրեր:

«Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԼՂՀ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՍԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱԿՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅ ՅԵՂԱՓԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

Հայաստան հաճախայկական հիմնադրամը

1995 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԿՍԵԼ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է

ՆՊԱՍՏՆԵՐ

ՀՀ եւ ԼՂՀ ՀՈՐՎԱԾ ԵՒ 1 ԿԱՐԳԻ ՀԱՇՄԱՆԴԱՄ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

ԾՐԱԳԻՐԸ

ԵՐԵՔ ՏԱՐՈՒՄ ԾՐԱԳՐՈՎ ՎՃԱՐՎԱԾ Է $ 1 430 000

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԻՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵԹԵ ԳՈՅԱՆԱ $ 600 000 ԵՒ ԱՎԵԼԻ

հնարավորություն կունենանք շարունակելու նոյասների հաստատումը, կրկնադասակելու դրանք տանների առիթով, ծրագրում ընդգրկելու զոհվածների միայնակ ծնողներին, ստեղծելու ծրագրի հետագա անխափան իրականացման անձեռնմխելի ֆոնդ եւ կատարելու մեր ոլորտը Հայրենիքի համար կյանքն ու առողջությունը զոհաբերած ազատամարտիկների հանդեպ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 27 ժ. 12.00 - 24.00 ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ

ԲԱՐԻ ԳՈՐԾՈՎ ԴԻՄԱՎՈՐԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ

ԳՆՈՒՄ ԵՆՔ

Միայն ծագման փաստաթղթերով:

- Սեւ մետաղի ջարդոն եւ թափոն min 100 տ., 1 տ. արժեքը մինչեւ 35 դոլարին համարժեք դրամ:
- Ալյումինի ջարդոն եւ թափոն min 1 տ., 1 տ. արժեքը մինչեւ 800 դոլարին համարժեք դրամ:

Հեռ.՝ 58-39-96, 52-49-68, 46-09-61

ԿՈՐԵԼ Է

«Ջերմուկի պտուղ-բանջարեղենի գրասենյակ»

ԲԲԸ-ի պետական գրանցման վկայականը՝ 01-Ա 033358 գր. պետ. ռեգ. 13.05.97 թ., գրանցման № 20-130, 00191 համարել անվավեր:

Կազմակերպությունը մեծաքանակ վաճառում է շուկայականից մի քանի անգամ էժան արտասահմանյան ժակետներ եւ սվիտրեր (տղամարդու եւ կանացի):

Հեռ.՝ 73-80-98, 52-05-89

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիւ 65. Դասիչ 69149. Պատուէր 725. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 12. 12. 1997. Գինը՝ 100 դրամ